Azg
armenian daily
31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 ՈՒՐԲԱԹ 199(2884)

ՄԱԿ-ն աշխատակիցներին դուրս է բերում Իրաքից

Օգոստոսի 19-ին Բաղդադում իր կենտրոնակայանի դեմ կատարված մահացու պայթեցումներից եւ դրանց հաջորդած խժդժություններից հետո, ՄԱԿ-ը երեկ որոշեց իր օտարերկրյա աշխատակիցներին դուրս բերել Իրաքից: ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնակայանից հայտարարվեց, որ Իրաքում մնալու են տեղացի աշխատակիցները, իսկ օտարերկրացիները տեղավորվելու են Հորդանանում եւ Կիպրոսում՝ այդ երկրներից վերահսկելու կազմակերպության մարդասիրական գործունեությունն Իրաքում: Այլ խոսքով, ՄԱԿ-ը չի դադարեցնում իր գործունեությունը երկրում:

Հետեւելով ՄԱԿ-ի օրինակին, Միջազգային կարմիր խաչը երեկ Իրաքում գտնվող իր 600 տեղացի եւ օտար աշխատակիցներին հարցում արեց, թե ուզո՞ւմ են շարունակել իրենց աշխատանքը: Նրանց պատասխանից է կախված ՄԿԽ-ի ղեկավարության որոշումը:

Մինչ այդ, ինչպես «Ազգը» նշել էր նախապես, ֆրանսիական «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպությունն սկսեց երկրից դուրս հանել իր աշխատակիցներին:

Աղտոտված ջուր օգտագործած հիվանդների թիվը հասավ 47-ի. ախտորոշումը՝ դիզենտերիա

Ինչո՞ւ է բնակչությունը ուշ տեղեկացվել

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի տնօրեն Արա Ասոյանը երեկ կեսօրին **«Ազգին»** տեղեկացրեց լաբորատոր հետազոտության արդյունքների մասին: Աղտոտված ջուր օգտագործած եւ ինֆեկցիոնում հայտնված առաջին հիվանդի օրգանիզմում հայտնաբերվել են դիզենտերիայի մանրէներ: Մեր խոսակցության պահին հիվանդանոցում արդեն 36 հիվանդ կար, 9-ը 15 տարեկանից բարձր տարիքի, մնացած 27-ը ավելի ցածր տարիքի, քանի որ երեխաների դիմադրողականությունը միշտ ավելի թույլ է (ինչպես եւ ծերերինը), եւ նրանք ամենից շատ են ենթակա վարակի վտանգին: Երեկոյան հիվանդների թիվն արդեն հասավ 47-ի: Ամենափոքրը 9 ամսական երեխա է, ամենամեծը՝ 44 տարեկան տղամարդ: Ծանր դեպքեր առայժմ չկան, վերակենդանացման բաժինը դատարկ է: Հիվանդության ընթացքը բնորոշվում է թեթեւ կամ միջին ծանրությամբ: Արա Ասոյանի համոզմամբ, պատկերը տագնապահարույց չէ՝ շնորհիվ բնակչության սթափության ու զգոնության: Հիվանդանոց դիմել են բացառապես «թարմ հիվանդներ», որոնք առաջին իսկ ախտանշանները հայտնվելուն պես ահազանգել են իրենց կամ տեղամասային բժշկին, եւ հիվանդությունը չի հասցրել բարդանալ: Համենայն դեպս, հիվանդների թիվը սկսում է աճել, եւ, ըստ մասնագետի, կշարունակվի երեւի մինչեւ այսօրվա վերջ: Հիվանդության գաղտնի շրջանը 2-4 օր է, եւ մինչեւ շաբաթավերջ հիվանդների հոսքը պիտի որ դադարի, քանի որ վթարը տեղի է ունեցել կիրակի օրը:

Տես էջ 3

Այս եւ 3-րդ էջի նկարներում ջրային ծառայությունների մեղքով հիվանդացած փոքրիկներն են:

ԵՂԱՆԱԿ

Տաշիրում տեղացել է առաջին ձյունը

Հոկտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը Լոռու մարզի Տաշիր քաղաքում տեղացել է 35 սմ ձյուն, որի հետեւանքով քաղաքի որոշ թաղամասեր հոսանքազրկվել են: Վնասվել են նաեւ հեռախոսալարերը: Ընթանում են վերականգնողական աշխատանքներ:

Դպրոցական արձակուրդները միացվեցին ձմեռայինին

ԵՐԵՎԱՆ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՀՀ կրթության եւ գիտության նախարար Սերգո Երիցյանի հրամանագրով, Հայաստանի հանրակրթական դպրոցների համար նախատեսված աշնանային՝ նոյեմբերի 3-9-ի եւ գարնանային՝ մարտի 22-28-ի արձակուրդային օրերը միացվում են ձմեռային արձակուրդային օրերին՝ դեկտեմբերի 29-ից մինչեւ հունվարի 25-ը: Այս մասին հայտնեց նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Սամվել Պեղանյանը: Նրա խոսքերով, այս որոշումը չի վերաբերում հանրակրթական դպրոցների առաջին դասարանցիներին, որոնք կհանգստանան նաեւ աշնանային եւ գարնանային արձակուրդների օրերին:

Շարունակվում են տուժողների ճառերը

Պահանջը մեկն է՝ մահապատիժ

Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում շարունակվեց «Հոկտեմբերի 27»-ի գործի դատաքննությունը: Իրենց եզրափակիչ ճառերը ներկայացրին տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչները:

Ինչպես եւ սպասելի էր, նրանք որպես պատիժ ահաբեկիչների համար պահանջում էին մահապատիժ՝ ընդգծելով 1999 թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցածի սարսափելիությունն ու բարբարոսությունը:

Վերջին մի քանի նիստերի ընթացքում հետաքրքրական էր թերեւս իրենց հաստատին հնչող տարբեր մեղադրանքների եւ մահապատիժ պահանջելու ճառերի նկատմամբ հենց ամբաստանյալների վերաբերմունքը: Ինչ-որ լարվածություն կար, բայց դա ընկճվածություն կամ այլ կերպ որակել չի լինի: Մինչդեռ, ենթադրվում էր, որ մարդ արարածին նման բանադրանքի ենթարկելու դեպքում սեփական ոչնչության գիտակցումը կարող էր սարսափելի ծանր լինել:

Ա. Հ.

Կրկին ուժեղ բռնկում արեւի վրա

ՄՈՍԿՎԱ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Չորեքշաբթի լույս հինգշաբթի արեւի վրա կրկին տեղի է ունեցել ուժեղ բռնկում: Այս մասին «Նովոստի» գործակալությանը հայտնել են Ռուսաստանի հիդրոմետծառայությունում: Արեգակնային սկավառակի կենտրոնի մոտ տեղի է ունեցել առավելագույն ռենտգենյան դասի բռնկում: Մասնիկները արագորեն հասել են Երկրի մոտակայքը, որի հետեւանքով արեգակնային տիեզերական ճառագայթների հոսքը երկրամերձ տարածությունում դարձյալ աճել է՝ հասնելով այն մակարդակին, որ համապատասխանում են սաստիկ ալեկոծված ռադիացիոն իրադրության:

Համանախագահները կգան դեկտեմբերի առաջին տասնօրյակին

ԲԱՔՈՒ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան կժամանեն դեկտեմբերի առաջին տասնօրյակում: Այդ մասին հայտնելով «Էմ Փի Էյ»-ին, Ադրբեջանի ԱԳՆ ղեկավար Վիլայաթ Գուլիեւը հայտնել է, որ այցի հեռանկարը նոյեմբերից դեկտեմբեր կատարված է Ադրբեջանի նոր նախագահի պաշտոնակալության գործընթացի հետ: Համանախագահների նոր առաջարկությունների առնչությամբ Գուլիեւը ընդգծել է, որ «նրանք խոսում են նոր մոտեցման մասին, որը կարող է վերածվել նոր առաջարկությունների եւ գաղափարների: Սակայն թե որքան են նոր այդ առաջարկությունները, հայտնի կդառնա միայն Ադրբեջանի նախագահին դրանք ներկայացնելուց հետո»:

ԳՈՒՅԺ

Ռոբերտ Մավիսակալյան



Անողոք հիվանդության դեմ երկար պայքարելուց հետո երեկ հանգեց մեր ժամանակների հայ լրագրության, մասնավորապես հեռուստալրագրության ամենաարժեքավոր դեմքերից մեկը՝ Ռոբերտ Մավիսակալյանը: Եթե հեռուստատեսությունն առավել լայն զանգվածների կարծիքը կազմավորող ամենաազդու միջոցն է, ապա Ռ. Մավիսակալյանն այդ կարծիքի գլխավոր ճարտարապետներից էր մեզանում: Նրա ստեղծած բոլոր հաղորդաշարերը, «Հինգշաբթի» թե «15 օր», «Հարցեր» թե «6-րդ ստուդիա» կամ «Արմենիա հոթ-լայն», հսկայական հետք են թողել, ավելին՝ ձեւավորել են հասարակական կարծիքը մեզանում: Եվ ոչ միայն մեզանում: 1991-1992 թթ.-ին, իր հստակ անգլերենով, վստահություն ներշնչող դիմագծերով եւ ազդու ներկայությամբ նա CNN հեռուստատեսությամբ կիրակնօրյա եթերում միլիոնավոր օտարերկրացիների առաջ ներկայացրել է հայկական իրականությունը, վարպետորեն դեմ դրել ադրբեջանական ու թուրքական քարոզչությանը, ստույգ ներկայացնելով Հայաստանի ու հայության կյանքը, Լեռնային Ղարաբաղի կնճռոտ էությունը: Եվ այդ ամենը՝ կատարյալ պրոֆեսիոնալիզմով, արհեստին ու արվեստին ամբողջական տիրապետելով:

Ծնվել է 1940 թ.-ին Երեւանում: 1965 թ.-ին ավարտել էր Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլիական բաժինը: 1971 թ.-ին մուտք էր գործել հեռուստատեսություն եւ հաջորդաբար ստանձնել պատասխանատու պաշտոններ՝ խմբագիր, բաժնի վարիչ, գիտահանրամատչելի հաղորդումների գլխավոր խմբագիր, «Լրաբեր» տեղեկատվական ծրագրի ղեկավար, ընդհուպ՝ հեռուստառադիոպետկոմի նախագահի տեղակալ, իսկ ավելի ուշ՝ «Հայաստան» եւ «Նորք» հեռուստաընկերությունների տնօրեն եւ «Արմենիա» հեռուստաընկերության քաղաքական մեկնաբան: 1990 թ.-ին 2 ամսով վերադարձման էր մեկնել Ատլանտա (ԱՄՆ)՝ CNN հեռուստաընկերության կենտրոնական: 1991 թ.-ից անդամ էր Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության եւ Թեհրանի մշակութային միության: Մաս էր կազմում այդ զույգ կազմակերպությունների վարչություններին: 1999 եւ 2003 թթ.-ին ՀՌԱԿ-ի ցուցակներով առաջադրվել է Ազգային ժողովի անդամության թեկնածու: Թարգմանել է մի շարք գրքեր: Ամուսնացած է, ունի 2 որդի:

Ընտանեկան հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, իսկ թաղմաքիանքը՝ նոյեմբերի 1-ին, ժամը 12-14-ը, երկուսն էլ Հայաստանի ժուռնալիստների միության շենքում:

Ցավակցություն

■ Հայաստանի Թեհրանի մշակութային միության կենտրոնական վարչությունը սգում է վարչության բազմամյա անդամ Ռոբերտ Մավիսակալյանի մահը եւ ցավակցություն հայտնում նրա հարազատներին:

■ «Ազգ» օրաթերթի խմբագրությունը սգում է իր տաղանդավոր գործընկերոջ՝ Ռոբերտ Մավիսակալյանի մահը եւ վշտակցում նրա բոլոր հարազատներին:

ԸՆԹԱՑԻԿ

Եկող տարվա բյուջեն խոստանում է աշխատավարձերի բարձրացումներ

2004 թ.-ի պետական բյուջեն կազմելիս Հայաստանի կառավարությունը ծրագրել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 7 տոկոս աճ, որի արդյունքում ՀՆԱ-ն կհասնի 1 տրիլիոն 694 մլրդ դրամի: Սղաճը կանխատեսվում է 2,5-3 տոկոս: Այս մասին, ներկայացնելով կառավարության հաստատած 2004 թ. բյուջեի նախագիծը, ասաց ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Պավել Սաֆարյանը:

Պետբյուջեի մուտքերը կկազմեն 269 մլրդ դրամ (ՀՆԱ-ի նկատմամբ՝ 15,9 տոկոս), ծախսերը՝ 311 մլրդ դրամ (ՀՆԱ-ի նկատմամբ՝ 18,8 տոկոս): Հարկային մուտքերը ՀՆԱ-ի նկատմամբ կկազմեն 15,1 տոկոս կամ 256 մլրդ դրամ: Փոխնախարարը հայտնեց, որ այս տարվա համեմատ հարկային մուտքերի ավելացումը կկազմի 36 մլրդ դրամ: Այդ գումարից 8 մլրդ դրամը պետք է գանձվի վարչարարության խստացման միջոցով, այսինքն՝ ստվերային տնտեսությունից: Մնացած հավելյալ մուտքերն ակնկալվում է ստանալ տնտեսական աճի արդյունքում:

Ծախսային մասով գերակշռողը սոցիալական, մշակութային եւ կրթական ոլորտներին ուղղված միջոցներն են: Կրթության եւ գիտության նախարարության գծով տարեկան հավելածը կկազմի 7,6 մլրդ դրամ, առողջապահության գծով՝ 4 մլրդ դրամ, սոցիալական ապահովագրության եւ սոցիալական ծրագրերի մասով՝ շուրջ 5 մլրդ դրամ:

Կառավարությունը եկող տարվա պետբյուջեում փոփոխություններ է նախատեսել աշխատավարձերի առնչությամբ: Ինչպես տեղեկացնի Պավել Սաֆարյանից, նվազագույն աշխատավարձի չափը 5 հազար դրամից կդառնա 13 հազար դրամ: Այսինքն՝ պետական հիմնարկներում այդ գումարից ցածր աշխատավարձ չի լինի: Ուսուցիչների աշխատավարձը ներկայիս 18 հազար դրամից կբարձրացվի մինչեւ 30 հազար դրամ: Թեեւ այստեղ արժե հիշեցնել ուսուցիչներին, որ այնպես, ինչպես ներկայիս 18 հազար դրամից իրենք ստանում են 14-15 հազար դրամը, ապա 30 հազար դրամից էլ լավագույն դեպքում 25 հազար դրամը կհասնի նրանց: Նշվեց նաեւ, որ դպրոցների տեխնիկական անձնակազմի աշխատավարձերը եւս կբարձրանան 8 հազար դրամից հասնելով 13 հազար դրամի: Բժիշկների 30 հազար դրամը կդառնա 33 հազար 500 դրամ, իսկ 1 հիվանդի պահպանման ծախսերը 7 հազար դրամից՝ 8 հազար 300 դրամ: Իսկ ընդհանրապես միջին աշխատավարձը կկազմի 15 հազար 700 դրամ:

Բյուջեի դեֆիցիտը եկող տարի կկազմի 42,4 մլրդ դրամ: Այն, ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարարի, պետք է ծածկվի ներքին աղբյուրների (3 մլրդ դրամ) եւ հիմնականում Համաշխարհային բանկի ու այլ վարկերի հաշվին: Ճիշտ է, այս տարի ՀԲ SAC վարկերը չեն լինելու, սակայն լինելու են այլ, նպատակային վարկեր:

Պավել Սաֆարյանն անդրադարձավ մի քանի առանձին ծախսային հոդվածների: Նա տեղեկացրեց, որ պաշտպանության համակարգին հատկացվել է 49,6 մլրդ դրամ, Լեռնային Ղարաբաղին՝ 17,2 մլրդ դրամ: Պետական պարտքի պահպանման ծախսերը կկազմեն 24,9 մլրդ դրամ, այս տարվա 20,9 մլրդ դրամի դիմաց: Չնայած այս տարվա ընթացքում պետական պարտքը չնչին չափով նվազել է (600 հազարով), բայց պահպանման ծախսերն ավելացել են, ինչը բացատրվեց այս տարվա կեսից այստեղ աշխատավարձերի բարձրացմամբ: Եկող տարի համեմատաբար թեթեւ է լինելու նաեւ արտաքին պարտքի սպասարկումը՝ 7,9 մլրդ դրամ 23 մլրդ դրամի փոխարեն:

Պատասխանելով լրագրողների հարցերին, Պավել Սաֆարյանն ընդգծեց, որ ջրի, էլեկտրաէներգիայի կամ գազի սակագների բարձրացման հարցը բյուջեում բացակայում է, այսինքն՝ նման բան նախատեսված չէ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատմում է Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցին...

«Փոքրիկ աղջիկ, տես, մայրիկդ աղոթում է, դու չե՞ս ուզում: Հասկացա, քեզ իմ զգեստներն են հետաքրքրում: Գեղեցի՞կ են: Տես, վարագույրներս նոր են: Ա՜խ, եթե պատմեմ, թե առաջ ինչպիսի տեսք եմ ունեցել: Չէ՛, շատ վաղուց չէ, ասենք՝ 15 տարի առաջ: Քանի՞ տարեկան ես, յո՞թ, ո՞ւթ, ուրեմն այն ժամանակ դու դեռ ծնված չէիր: Այսօր ես գեղեցկացել եմ: Մի երկու քանդակ, որ շատ հին են, հիմա կրկին տեղում են: Այս զանգը տեսնո՞ւմ ես, գիտե՞ս որքան ժամանակ չէին հնչեցնում: Վախենում էին: Ես ծայն չէի հանում, լուռ թաքնված էի այս շենքերի արանքում: Եթե իմ տեղն իմանային, լավ չէր լինի:

Ես Երեւանում պահպանված ամենահին եկեղեցին եմ՝ 12-13-րդ դար: այդ ժամանակներից պահպանված ոչ մի շենք չունենք: Ժամանակին ուրիշ եմ եղել: Ինչ արած, պատմություն է, իսկ հիմա կարող եմ ազատ շունչ քաշել: Որոշել էի ոչինչ չպատմել իմ անցյալից, բայց լավ, մի երկու խոսքով կասեմ: այստեղ ժամանակին Մովսես Տաթեւացին է աղոթել, գործել, այստեղ են պահվել բազմաթիվ ձեռագրեր, Երեւանում խմելու ջուրն առաջինը այս բակում է եղել, մի օրջան էլ կաթողիկոսարան է եղել: Հիմա էլ նման մի բան են նախագծում, պատկերացնո՞ւմ ես՝ կվերականգնեմ վաղեմի պատմությունս: Սա կաթողիկոսի երեւանյան նստավայրը կլինի:

1930-ականներին, երբ քաղաքի բոլոր եկեղեցիները քանդում, շենքեր էին կառուցում, իմ կյանքը մի ճարտարապետ փրկեց, ինձ այնպես քաղցրեց, որ ոչ ոք իմ տեղը չիմանա: Մեկ տասնամյակից ավել է՝ քանդվելու վտանգ չունեմ: 60 տարի սպասել եմ, որ մի օր գլուխս բարձր կանգնեմ բոլորիդ առջեւ:

Հա, պատմությունս չվերջացրի: Ասում էի՝ ինձ թաքցրեցին: Շենքը, որ սարքվեց, դպրոց էր, հետո՝ մինչեւ 1943-ը որպես հոսպիտալ աշխատեց: Վերջում եղավ Գիտությունների ազգային ակադեմիայի առաջին շենքը: Այսպիսով գիտությունն ու եկեղեցին միմյանց օգնեցին:

Մի պահ դուրս արի եկեղեցուց, արի, կարունակեմ: Տեսա՞ր, շենքը կտրատված է: Ճարտարապետն է այդպես արել, որ ես ոչ մի կողմից չնկատվեմ: Շենքի շինարարությունից հետո կարճ ժամանակ անցավ, ու ճարտարապետին ախորժեցին: Վատ էի զգում: Նա իր կյանքով իմ կյանքը փրկեց:

Դպրոցում քեզ պատմե՞լ են, որ մեր ժողովրդի ծանր պահերին մեր լեզուն ու կրոնն է պահել: Հավանաբար գիտես, լսել ես: Բայց այսօր շատ եմ տխրում, մենք ես ու ակադեմիան խնդիր ունենք: Պիտի քանդեն մի շենք, որ տարիներ շարունակ հայ գիտնականներ են աշխատել: Ճիշտն ասած՝ այսօր իրենք մի շատ ավելի մեծ ու գեղեցիկ շենք ունեն, որ կարող են աշխատել:

Ասում են՝ իմ հետեւի բակերից ինձ առանձնացնելու համար վեհարանի շենքը այդ մասում են կառուցելու: Պատկերացնո՞ւմ ես՝ իմ առջեւ բաց տարածություն կլինի, բոլորը ինձ կտեսնեն: Գիտես՝ էլ չեմ մտքի: Հիմա մի փիչ ցուրտ է, նույնիսկ առաջարկում էր շենքի մեջտեղից կամար շինել, մուտք բացել դեպի եկեղեցի, մյուս երկու կողմերը պահել իբրեւ թանգարան:

Վատ եմ զգում, որ այսօր ես եւ հայ լեզվաբանները իրար հակառակ ենք: Հասկանում եմ, իրենց համար այս շենքը թանկ է, պատմություն, բայց երբ ինձ մոտ խոսում են շենքի առաջին հարկի վարձակալված տարածքների մասին, մեջս կասկած է ընկնում: Չգիտեմ՝ հնարավո՞ր է, թե՞ ոչ: Հեռագայում ո՞վ է տիրանալու ամբողջ շենքին: Ո՞ր հաստավիզը:

Ախր սա դարերի կառույց է, հնություն»:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Շենքի քանդման դեմ ցույցի են դուրս եկել լեզվաբանները:

ԱՍՈՒԼԻՍ ՄԱԼ-ՈՒՄ

«Նոր ժամանակները» «կգան» նախկին դաշնակի ղեկավարությամբ

Նախագահի նախկին թեկնածու, «Հեռանկար» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի նախագահ Արամ Կարապետյանն այսուհետեւ հավանաբար ավելի հաճախ կհանդիպի լրագրողներին: Նախագահական ընտրություններից հետո երկարատեւ դադարից հետո այժմ քաղաքական դաշտում նրա մասնակցությունը լինելու է իբրեւ «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահի: Հիմնադիր համագումարը կլինի մոտ մեկ ամսից: Վարչության 11 հոգանոց կազմում երեք նախկին կուսակցականներ են լինելու, երկուսը՝ նախկին դաշնակցականներ, երրորդի կուսակցական պատկանելությունը Արամ Կարապետյանը գերադասում է չհրապարակել: Իսկ նախկին դաշնակցական, ինչպես հայտնի է, ինքն է (որն Կարապետյանը նշում է, որ իրեն հեռացրել են կուսակցության շարքերից գաղափարական տարաձայնությունների պատճառով, մինչդեռ այլ պատճառներ են նշում նրա նախկին կուսակիցները, բացի այդ, հայտնի է, որ դաշնակցականները նախկին չեն լինում):

«Նոր ժամանակներ» կուսակցության թեմային Արամ Կարապետյանն անդրադարձավ երեկ Մամուլի ազգային ակումբում: Սակայն, ավելի շատ խոսեց մեր երկրի ներքաղաքական զարգացումների մասին, անդրադարձավ Ռուսաստանի քաղաքական իրավիճակին:

Նախագահական ընտրություններից առաջ թեւավոր խոսքեր դարձած Փարաքարը փակելու Արամ Կարապետյանի սպառնալիքները Ռուսաստանում որոշ իմաստով կարծես իրականություն են դառնում: Նման կտակ արեց ՄԱԱ-ի հյուրը՝ խոսելով Ռուսաստանում սկսված օլիգարխների «որսի» մասին: Արամ Կարապետյանը կարծում է, որ նույնը տեղի է ունենալու նաեւ Հայաստանում, սակայն մեր երկրում օլիգարխների դուրսմղումը քաղաքական դաշտից լինելու է ավելի կոնյունկտուրային՝ ընտրովի: Թերեւս դուրս մղված լինելու վտանգով է պայմանավորված խոշոր գործարարների կողմից կուսակցություններ ստեղծելու, լրատվամիջոցներ գնելու միտումը: Իսկ ինչո՞ւ այդ նույն գործարարներին թույլ տվեցին մտնել քաղաքական դաշտ, եթե դուրս պետք է մղվեին: «Ֆինանսավորում ապահովվեց», պատասխանում է Արամ Կարապետյանը եւ կանխատեսում, որ 21-րդ դարում քաղաքականության մեջ հիմնական դերակատարությունը հենց փողն է ունենալու:

Ի դեպ՝ կանխատեսումների մասին: Լրագրողների խնդրանքով Արամ Կարապետյանը ներկայացրեց առաջիկա մեկ տարվա ներքաղաքական զարգացումների իր սցենարը՝ կուսակցությունների ձուլման եւ խոշորացման շարունակություն, լուրջ խնդիրներ քաղաքական կոալիցիայի ներսում, խնդիրներ կոալիցիայի եւ ընդդիմության միջեւ: Ինչ վերաբերում է հանրապետության նախագահին, ապա, ըստ Արամ Կարապետյանի, կամ Ռոբերտ Քոչարյանից հրաժարական են պահանջելու, կամ էլ ինքը հրաժարական կտա՝ իշխանությունն իր թիմակիցներից մեկին թողնելով:

Մամուլի ազգային ակումբի հյուրն անդրադարձավ նաեւ Հայաստանի էներգահամակարգերի մասնավորեցմանը եւ «Գույք պարտքի դիմաց» ծրագրին: Ըստ բանախոսի, այս գործարքները հղի են Ռուսաստանի նկատմամբ մեր երկրում լարվածության առաջացմամբ՝ էլեկտրաէներգիայի սակագները բանկանալու են, ՌԱՕԵԷՍ-ն էլ լավագույն սեփականատերը չէ, քանի որ ռուսական այս ընկերությունն ինքը խնդիրներ ունի: Արամ Կարապետյանի համոզմամբ, «Գույք պարտքի դիմաց» պայմանագրով Ռուսաստանի մասնավորեցրած գործարանների հեռանկարը եւս մշուշոտ է: Դրանք, ըստ նրա, դժվար թե նորմալ գործարկվեն:

Մ. Հ.

Ազատ տեղեկություն ստանալու եւ տարածելու փակուղու առաջ

Նոր օրենքով կունենանք ազատ լրագրողներ, թե՞ դատարանի վախից կարկամողներ...

Զանգվածային լրատվամիջոցների մասին ՀՀ կառավարության առաջարկած օրենքի նախագիծը երեկ քննարկվում էր «Վերածնունդի համախմբում» հասարակական կազմակերպության հրավիրած սեմինարում: Ինչպես նշեց կազմակերպության նախագահ Վազգեն Պետրոսյանը, նախագծում առկա են բազմաթիվ թերություններ, իսկ որոշ դրույթներ սահմանափակում են խոսքի ազատությունն ու մարդու իրավունքները՝ վտանգի տակ դնելով ազգային անվտանգությունը: Պարզելու համար, թե որքանով է նախագիծը համապատասխանում ներկա եւ ապագա հասարակության պահանջներին, իրավական պետություն ունենալու գաղափարին, նաեւ եվրոպական օրենսդրական դաշտին, իրենք կիրառել են համեմատական իրավունքի մեթոդները եւ նախագիծը ենթարկել համեմատական հետազոտության: Հետազոտվել են Ֆրանսիայի, Շվեդիայի եւ այլ պետությունների գործող օրենքները, ինչպես նաեւ մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Ըստ հետազոտությունը իրականացրած իրավաբանների խմբի, կառավարության ներկայացրած օրենքը բվում է, թե կարգավորում է ազատ տեղեկատվություն ստանալու եւ տարածելու մարդու սահմանադրական իրավունքը, մինչդեռ առանձին հոդվածներ իրականում սահմանափակում են խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքը, որն ամրագրված է ՀՀ սահմանադրության 24 հոդվածում, 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում եւ միջազգային այլ պայմանագրերում: Նրանց դիտարկմամբ, օրենքի նախագծում հստակ սահմանված չէ, թե ո՞ր մարմինը պիտի կարգավորի լրատվության դաշտում ծագած վեճերը, գովազդի վերաբերյալ որեւէ հիշատակում չկա, ինչպես նաեւ սահմանափակված է լրատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողի իրավունքը՝ այդ լիազորությունը հանձնելով դատարանին:

Զանգվածային լրատվության մասին օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաեւ լրագրողին կարող է պարտադրվել դատական կարգով՝ քրեական գործի առիթով: Իրավաբանների համոզմամբ, դատարանին նման լիազորություններով օժտելը կհանգեցնի մի շարք չարաշահումների: Թեպետ բողոքարկող կողմերի միջեւ հավասարակշռություն պահպանելու նկատառումով նրանք կողմ են որոշ չափով հիշյալ իրավունքի սահմանափակմանը՝ ելնելով հասարակության շահերից ու անվտանգությունից, սակայն չեն ընդունում դատական կարգով լրագրողին պարտադրելը:

Ռ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Նիւթերը ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Տիգրան Նաղդալյանի սպանության գործի դատավարությունն առաջանում է զգալի խայլերով: Երեկվա դատական նիստը դրա վկայությունն էր:

Դատարանը երեկ իր աշխատանքն սկսեց վկաների հարցաքննությամբ: Առաջին վկան ամբաստանյալ Հովհաննես Հարությունյանի (Ամերի) դուստր Ռուզան Հարությունյանն էր: Քանի որ վկան հղի է եւ հղիությունը ծանր էր տանում, որոշվեց հրաժարակել նրա նախաքննության ժամանակ տված ցուցմունքները: Վկան հեռացավ:

Հարությունյանը նշել է, որ Արմեն Սարգսյանը Գրիգոր Պետրոսյանի միջոցով իրեն գցել է այդ կրակի մեջ:

Վկա Ռուզան Հարությունյանը ցուցմունք էր տվել նաեւ, որ Արմեն Սարգսյանի հեռու կինը՝ Մանիկ Վարդանյանը, իր մորը հաղորդել է Արմեն Սարգսյանի խոսքերը, թե Ամերը թող աչխատի չբռնվել, իսկ եթե բռնվի էլ, թող մեղքը վերցնի իր վրա: Հարությունյանի խոսքերով, մոր հետ իրենք երկու անգամ գնացել են Արարատ՝ տկն Գրետայի մոտ: Ի դեպ, առաջին այցելության ժամանակ տկն Գրետան զարմացել է, որ Մանիկ Վարդանյանը նման բան է փոխանցել: Տկն Գրետան ավելացրել է նաեւ, որ ոչ իրենք, ոչ Արմեն Սարգսյանը կաղ չունեն սպանության հետ:

Դատարան էր ներկայացել նաեւ վկա Հրանտ Ալավերդյանը, որ Արմեն Սարգսյանի հեռու վարորդն էր: Ալավերդյանը, պնդելով իր նախաքննական ցուցմունքները, նշեց, որ Մանիկ Վարդանյանը զանգել է իրեն, ասել, որ Արարատից գնան Երեւան: Եկել են Երեւան, Հովհաննես Հարությունյանի տան հարեւանությամբ գտնվող տկն Անահիտի՝ Արմեն Սարգսյանի մորաքրոջ մոտ: Մանիկ Վարդանյանն Ալավերդյանին չի ասել, թե ինչու են գնում Երեւան:

Վկային հարցեր տալու ժամանակ, թերեւս Հրանտ Ալավերդյանի հոխորտացող կեցվածքի պատճառով վիճաբանություն սկսվեց, որը մեղմելու հարցում դատավոր Սարո Արամյանը կրկին ցուցաբերեց իր անփութությունը: Այնուհետեւ Արմեն Սարգսյանի պաշտպան Ամալյա Ավագյանը, Հովհաննես Հարությունյանին բնութագրելու մասին վկային ուղղված իր հարցը հանելու կապակցությամբ, առարկեց դատարանի գործողությունների դեմ: Տկն Ավագյանը նշեց, որ խախտվում է հավասարության սկզբունքը: Մեր կողմից նշենք, որ նման սկզբունքի խախտում չկար, քանի որ վիճաբանության պատճառով դիտողության արժանացավ մեղադրող կողմը:

Վկային հարց ուներ նաեւ ամբաստանյալ Արմեն Սարգսյանը: «Խնդրում եմ քեզ, որպես քո ընկերը, քո ախպերը, ճիշտն ասա, թե ինչ էր բավականին ուշ ժամի գնում Ամերենց տուն, փոխանակ վարորդի առաջարկով սպասի մինչեւ առավոտ, Մանիկ Վարդանյանը պատասխանեց, որ անհանգստացած էր Ամերի կնոջ՝ Գայանե Մելքոնյանի առողջական վիճակով: Այս հանգամանքը հետաքրքրական է այնքանով, որ այդօրվա այցելությունից հետո Մանիկ Վարդանյանը չի անհանգստացել Գայանե Մելքոնյանի առողջությամբ, այցելության չի գնացել:

Տկն Վարդանյանն իր ցուցմունքում նշեց, որ Գայանե Մելքոնյանի հետ առերեսման ժամանակ դեռեւս նախաքննության ընթացքում ինքը նկատել է, որ քննիչը թելադրում է Գայանեին: Այս ամենից հետո հենց դատարանում կատարվեց Գայանե Մելքոնյանի եւ Մանիկ Վարդանյանի առերեսում: Գայանե Մելքոնյանը նշեց, որ ինքնագլուխ ամուսնուն չէր ասի, թե ինչ պետք է անել: Տկն Մելքոնյանն ասաց, որ Ամերին փոխանցել է այն, ինչ իրեն ասել է Մանիկ Վարդանյանը:

Դատարանը երեկ լսեց 9 վկայի: Այսօր դատական նիստը կշարունակվի:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արմեն Սարգսյանի քեռակինը ժխտում է այն, ինչ պնդում է Ամերի կինը

Այս գործով վկաների մի մասն ըստ էության ասելիք չուներ

Ըստ հրաժարակված ցուցմունքների, Արմեն Սարգսյանի ծերբակալությունից հետո Ռուզան Հարությունյանն իր քրոջ հետ մասնակցել է տկն Գրետայի նստացույցին: Մասնակցել են, որպեսզի աղացուցեն, որ հայրը սպանության կազմակերպման հետ ոչ մի կապ չունի, որ Հովհաննես Հարությունյանը կապված չի եղել եւ սուտ ցուցմունքներ չի տվել:

Վկայի ցուցմունքներով, եթե Հովհաննես Հարությունյանն ընդհանրապես մասնակից է եղել սպանությանը, ապա նրան ներքաշել են եւ ոչ թե ինքն է մեկին ներգրավել: Նաղդալյանի սպանությունից հետո իր նկատմամբ հայտարարված հետախուզման ժամանակ Հովհաննես Հարությունյանն իր ընտանիքի՝ ոստիկանության կողմից հետախուզվելու հանգամանքը բացատրել է նրանով, թե նախագահական ընտրությունների հետ կապված միտինգներին է մասնակցել: Այդ է եղել պատճառը, որ փնտրել են Հովհաննես Հարությունյանին:

Հետագայում Ամերը խոստովանել է իր ընտանիքի անդամներին, որ սպանության հետ ինքը կապ ունի:

Ըստ հրաժարակված ցուցմունքների, Արմեն Սարգսյանի ծերբակալությունից հետո Ռուզան Հարությունյանն իր քրոջ հետ մասնակցել է տկն Գրետայի նստացույցին: Մասնակցել են, որպեսզի աղացուցեն, որ հայրը սպանության կազմակերպման հետ ոչ մի կապ չունի, որ Հովհաննես Հարությունյանը կապված չի եղել եւ սուտ ցուցմունքներ չի տվել:

Վկայի ցուցմունքներով, եթե Հովհաննես Հարությունյանն ընդհանրապես մասնակից է եղել սպանությանը, ապա նրան ներքաշել են եւ ոչ թե ինքն է մեկին ներգրավել: Նաղդալյանի սպանությունից հետո իր նկատմամբ հայտարարված հետախուզման ժամանակ Հովհաննես Հարությունյանն իր ընտանիքի՝ ոստիկանության կողմից հետախուզվելու հանգամանքը բացատրել է նրանով, թե նախագահական ընտրությունների հետ կապված միտինգներին է մասնակցել: Այդ է եղել պատճառը, որ փնտրել են Հովհաննես Հարությունյանին:

Հետագայում Ամերը խոստովանել է իր ընտանիքի անդամներին, որ սպանության հետ ինքը կապ ունի:

Հայ խորհրդարանականների պատվիրակությունը Կանադայում

Կանադահայ խորհրդարանական Սարգիս Ասատուրյանը երկուշաբթի օրը հյուրընկալել է հայկական խորհրդարանականների պատվիրակությանը, որը Կանադա-Հայաստան խորհրդարանական ընկերության փոխադարձ այցելությունների շրջանակներում այժմ գտնվում է Կանադայում, տեղեկացնում է էլ. փոստով ստացված հաղորդագրությունը:

Պատվիրակության անդամները՝ Սարգիս Ավետիսյանը (Հանրապետական կուսակցություն), Սամվել Բալասանյանը («Օրինաց երկիր» կուսակցություն), Ալեքսան Կարապետյանը (Ազգային միություն կուսակցություն) եւ Վիկտոր Սողոմոնյանը (Ազգ նախագահի աշխատակազմի ղեկավար), Մոնրեալում եւ Օտտավայում բազմաթիվ հանդիպումներ են ունեցել բարձրաստիճան կառավարական, այդ թվում միջազգային զարգացման կանադական գործակալության պաշտոնյաների, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի, ինչպես նաեւ Միջին Արեւելքի գծով պետքարտուղար Գար Կնուտսոնի, սենատորներ Դեյվիդ Սմիթի, Ռայմոնդ Սեյոկվիի, փոխխոսնակ Էլենի Բակոպանոսի, արտգործնախարար Բիլ Գրահամի եւ տրանսպորտի նախարար Դեյվիդ Կոլենեթտիի եւ ընտրությունների գծով իրավաբանական խորհրդի նախագահի օգնական Հոլի Մկմանուսի հետ: Քննարկվել են մասնավորապես Հայաստանում կանադական զարգացման ծրագրերի եւ ընդհանրապես Հարավային Կովկասում Կանադայի խաղաղականության, ինչպես նաեւ ընտրական համակարգի հետ առնչվող հարցեր: Նրանց ընդունել է նաեւ Կանադայի վարչապետ Ժան Կրետիենը: Հայաստանի դեսպանատանը պատվիրակությանը հյուրընկալել է ՀՀ դեսպան Արա Պապյանը:

«Շափազանց ուրախ եմ խորհրդարանական բարեկամության ընկերության կատարած աշխատանքի եւ Հայաստանի հանդեպ Կանադայի կառավարության, ինչպես նաեւ հասարակության ցուցաբերած հարգանքի պատշաճության համար: Շնորհակալություն բոլորին եւ հատկապես Մ. Նահանգների կոնգրեսական Ֆրենկ Փալոնիին եւ ՀՀ դեսպան Արա Պապյանին՝ Հայաստանի պատվիրակության այս այցելությունը հաջող անցկացնելու գործում իրենց աջակցության համար», ասել է այդ առթիվ կանադահայ խորհրդարանական Սարգիս Ասատուրյանը:

Աղտոտված ջուր օգտագործած հիվանդների թիվը հասավ 47-ի. ախտորոշումը՝ դիզենտերիա

Սկիզբը էջ 1

Սանիտարահակահամաճարակային ծառայությունն առաջին ահազանգերը ստացել է կիրակի երեկոյան: Կարծում ենք, եւ համաճարակաբանների, եւ առողջապահների առաջին մղումը պիտի լիներ ռադիոյով ու հեռուստատեսությամբ այդ մասին անհապաղ տեղեկություն սփռելը: Ավաղ, Կենտրոն համայնքի եւ Արաբկիրի բնակչությունն այդ մասին իմացավ երկուշաբթի կեսօրից հետո, կամ նույնիսկ երեկոյան, երբ արդեն հասցրել էին ջուրն օգտագործել խմելու կամ ճաշ եփելու նպատակով: Հիշեցնենք, որ աղիքային վարակի կլինիկական ախտանշաններն են՝ գլխացավ, սրտխառնոց, փսխում, լուծ, հնարավոր է ջերմության բարձրացում: Հիգիենիկ-հակահամաճարակային տեսչության պետի տեղակալ Մարիետա Բասիլիսյանը պատմեց, որ հիվանդների մի մասը հայտնաբերվել է բակային համայքերի ժամանակ, բայց եղել են օրինակներ, երբ շատերը չեն ցանկացել հոսպիտալացվել: Խնդրի բարդությունն այն է, որ բնակիչների մի մասը նախընտրում է ինքնաբուժմամբ զբաղվել: Իսկ դա նշանակում է, որ նրանք կարող են օգտագործել տվյալ հիվանդությանն անհամապատասխան դեղամիջոցներ, խախտել բուժման սխեման եւ հետագա ստացիոնար բուժումների համար բարդություններ ստեղծել: Հնարավոր է նաեւ, որ այդպիսի դեպքերում մանրէն երկար ժամանակ մնա օրգանիզմում:

Շաբաթվա սկզբից ամեն օր հետազոտվում է նաեւ խմելու ջուրը: Դրա որակական եւ անվտանգության ցուցանիշները շարունակում են չհամապատասխանել սանիտարական ստանդարտներին: Սակայն, իբրեւ մխիթարություն տուժած համայնքի բնակիչների, Մարիետա Բասիլիսյանը նշեց, որ այն չափաբաժինները, որոնց կատարվում է ջրի գերքլորացումը, տաճ զգացողությունից զատ որեւէ լուրջ վնասագով չեն սպառնում: Բայց բոլոր դեպքերում ջուրը պետք է օգտագործել միայն եռացրած վիճակում, բանջարեղենն ու միրգը լվանալ դարձյալ եռացրած-հովացրած ջրով, եւ բուժօգնության դիմել առաջին ախտանշանը երեւան գալուն պես:

90-ական թթ. ի վեր ջրմուղի ոլորտի աշխատողների հավաստմամբ, նման խոշոր վթար տեղի չէր ունեցել, չնայած մշտապես վկայաբերվում է ցանցի տեխնիկական ծանր վիճակը: Բայց ինչու բացառապես անձրեւաջրերի ներթափանցման մասին էր խոսվում, երբ վթարի օջախներն այսօր էլ լրիվ չեն հայտնաբերվել, երբ ընդամենը մի քանի օր անց ջրմուղի իրավասուները խոսում են նաեւ կոյուղատարների հնարավոր վնասվածքներից կեղտաջրերի հոսքի մասին՝ դեպի վնասված ջրատարները: «Ակնհայտ է, որ միայն անձրեւաջրեր չեն եղել, եղել են նաեւ այլ ջրեր», ասում է «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ մամուլի պատասխանատու Մուրադ Սարգսյանը:

Վթարված հատվածների սխեման ու պատկերը դեռ չեն ամբողջացել: Ջրատարները տեղավորված են գետնի տակ, եւ տեսական դատողությունները բավարար չեն վերջնական եզրահանգումների համար: Եվ ջրմուղագործները շարունակում են փորել՝ վնասված նոր հատվածների հավանականությունը չբացառելով:

Դեռ պետք է պարզաբանել նաեւ, թե ինչպե՞ս, ի՞նչ պատճառով համակարգ թափանցեց այդքան մեծ քանակով կեղտաջուր: Դեռ պետք է հայտնաբերել կեղտաջրերի ելքի օջախը, որտեղից գուցե այսօր էլ շարունակվում է խմելու ջրի աղտոտումը: Ուժեղ անձրեւներ ու հեղեղներ էլի են եղել, բայց նման բան չի արձանագրվել:

Այուս ոչ լավատեսական ենթադրությունն էլ այն է, որ տարիներ չփոխված ու չնորոգված խողովակներն իսկապես հասել են գոյության սահմանագծին, եւ մենք ամեն պահ սպասելու ենք նման արտակարգ պատահարների: Երեւանում ջրատարների 30 տոկոսն արդեն սպառել է իր ժամկետները, եւս 30 տոկոսը՝ 20-30 տարի շահագործվում է: Այսինքն՝ 10 տարի անց դրանց ժամն էլ է հնչելու: Ջրային տնտեսության իրավասուներն անընդհատ հիշեցնում են, որ համակարգը խիստ թանկ ու ծախսատար է, եւ ջրի սակագնի թանկացումը պատճառաբանվում է այդ հանգամանքով: Արդյոք հնարավոր նոր թանկացումը կարո՞ղ է փրկել նման փորձանքներից: Ոչ, պարզվում է՝ ոչ, որպեսզի համակարգն իսկապես առողջանա, սարսափելի մեծ քվերի անհրաժեշտության մասին է խոսվում, 300-400 մլն դոլար է պետք: Բայց գումարի բացակայությունը, քանի դեռ չի գտնվել խնդրի լուծման իրական միջոցը, չի նշանակում, թե չպետք է ձեռնարկել նաեւ նվազագույնը: Արդեն 3-4 տարի սկսվել եւ դեռ ավարտին չեն հասել գոնե ջրատարների քարտեզագրման, գույքագրման աշխատանքները: Խողովակաշարերի ընդհանուր երկարությունը 2000 կմ է, եւ նման լայնամասշտաբ հետազոտությունն իրականացվում է սուղ քվով աշխատողների խմբով: Պարզ է, որ աշխատանքը կրիայի քայլերով պիտի ընթանա: Ավելացնենք նաեւ այն փաստը, որ Երեւանի շատ հատվածներ ընդհանրապես ժամանակին չեն էլ քարտեզագրվել, կառուցվելով, այսպես ասած՝ ժամանակավոր սխեմաներով, եւ ցանցի մեջ են մտել ընթացքից: Ստացվում է, որ «էյ յութիլիթին», որ ջրմուղի կառավարման օպերատորն է, իրականում գլուխ չի հանում համակարգը կառավարելի դարձնելու բարդ խնդրից, եւ անկառավարելի իրավիճակում նման դեպքեր միշտ էլ կանխատեսելի են: Ստացվում է նաեւ, որ ջրի սակագների բարձրացումը հարկավոր է ընդամենը պարբերական վթարները չեզոքացնելու, այսինքն՝ օրհասը երկարաձգելու համար: Ողջ համակարգն է այսօր խոցելի վիճակում: Եվ լավ է, որ գոնե ամառն անցել է:

Մի պատառ Ֆլորենցիա Սոֆիակի արտում

Ուրծակ դաշտերի անսահմանության մեջ փռված խաղողի այգի, որի մի եզրին դռնակ է տեղադրված, թեեւ այգին ոչ մի կողմից ցանկապատված չէ: Այս պատկերը հարազատ է յուրաքանչյուրիս, ով երբեւէ ապրել է գյուղում: Գյուղական կենսափիլիսոփայության պարզ իմաստությամբ այգեգործը համենայն դեպս այգի մտնելու հրավեր է հղում անցորդին:

Սոֆիակ քաղաքի նորակառույց հրապարակն սկսվում եւ ամբողջանում է անմիջական հրավերի նույն տրամաբանությամբ՝ բաց դարպաս, որի գլխին նաեւ խաղաղ նստած է առյուծը՝ չարից ու փորձանքից փրկելու մեծ ազեն տեսած քաղաքը:

«Ճարտարապետությունն ինքնաբավ արվեստ է, բայց քանդակի, կերպարվեստի, խճանկարի հետ նրա երկխոսությունն ավելի սրում ու ազդեցիկ է դարձնում զգացմունքային ընկալումը», ասում է նախագծի հեղինակ, ճարտարապետության ակադեմիկոս Ջիմ Թորոսյանը: Ստեղծագործական սինթեզի այդ սկզբունքով է նախագծվել ու կառուցվել Սոֆիակի հրապարակը:

Երկրաբարժից անմիջապես հետո աշխարհի տարբեր ծայրերից նախագծային ինստիտուտները Սոֆիակը վերակենդանացնելու բազմաթիվ առաջարկներ արեցին, անվճար օգնության առաջարկներ: Շվեյցարացի ճանաչված մի ճարտարապետ նույնիսկ անձամբ ներկայացավ՝ արդեն պատրաստի նախագծով: Այն ժամանակ Ջիմ Թորոսյանը զբաղված էր կասկադով ու քաղաքապետարանի շենքով (նույնպես խոշոր կառույցներ), բայց թողեց ու կլանվեց Սոֆիակով:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ մի օր ճարտարապետին այցելեց Սոֆիակի նախկին քաղաքապետ Սուրեն Ավետիսյանը՝ տնից ու կայքից զրկված մարդկանց համար ոչ թե տանիք, այլ հրապարակ կառուցելու մտադրությամբ: Ճարտարապետը նախ ապշեց, ապա փորձեց հրաժարվել, բայց ավերված քաղաքի քաղաքագլխին հաջողվեց համոզել նրան նույնպես պարզ ու առողջ հակափաստարկով. «Տունը մեկի համար է, հրապարակը՝ բոլորի, տառապած մարդկանց խոսք ու զրույցի, ուրախության տեղ է հարկավոր: Բնակարան այսպես թե այնպես կառուցելու ենք»:

Թե ինչ կերպար էր ունենալու Սոֆիակի հրապարակը, միանգամից դժվար էր պատկերացնել: Ինչ բովանդակություն ընտրել եւ ինչ ձեւի մեջ պարփակել: Իր հավատամքին անդավաճան, թե աշխարհում ամեն խնդիր լուծում ունի, պետք է միայն որոնել, ճարտարապետը ի վերջո հայտնագործեց այն. դա ողբերգություն ապրած քաղաքի հակադրումն էր տարածության կենսուրախ միջավայրին, որ ապագայից էր գալիս ու իջնելու է այնտեղ: Հրապարակը ողբերգության վերջակետի ճարտարապետական խորհրդանիշ էր դառնալու՝ գրավիչ, կանչող կամարաշարով ու շատրվանների աղմուկով: Եվ ճարտարապետական ձեւն ու բովանդակությունը շաղկապեց այդ հենքի վրա: Իր հայրենիքում անուն ու համարում վաստակած Ջիմ Թորոսյանին բախտ է վիճակվել մի տարի ապրել Իտալիայում, մոտիկից առնչվել հռոմեական փառապանծ արվեստի կերտվածքներին, եւ նրա այս ստեղծագործությունը իտալական երազանքի կենդանացումն է նաեւ: Երեւակայության մեջ մարմին առավ, իր բնորոշմամբ, «մաժոր» հրապարակի կերպարը՝ ուրախ, ժպտացող, ինչպես Վենետիկի շենքերը: Այն ժամանակ Սոֆիակը շատ էր խայտաբղետ, խառնիխուռն ու թափթփված, եւ հրապարակը նաեւ դառնալու էր «կորիզ», որի շուրջը պիտի հավաքվեր քաղաքն ու աստիճանաբար մաքրվեր ավելորդություններից: Կառուցվեց նախկին «Գեղամեջ» կոչվող թաղամասում, որ տարեց ու երիտասարդ համամլեցիների հավաքատեղին էր: Ճարտարապետն այլ տեղ էր ընտրել՝ նույնպես նորակառույց, սեղ եկեղեցուն հանդիպակաց, քաղաքը եզերող ոգեղեն բլուրներին դեմ հանդիման, բայց սոֆիակցիները պնդեցին ավանդական հավաքատեղու տարբերակը: Եվ դա մի տեսակ տուրք էր ոչ հեռավոր անհոգ անցյալին: Հրապարակի գույնը կենսալի վարդագույնն է, արեւահայաց կամարաշարն ավարտվում է 20 մ երկարությամբ ու 10 մ բարձրությամբ դեկորատիվ պատով, որի վրա արեգակի սկավառակն է, վերածննդի խորհրդանիշ փյունիկ թռչունն ու հավատի խաչը: Տարածությունը մշակված ու համակված է լույսի ու օդի բաց տիրապետությամբ, որոնք գլխավոր գաղափարի կրողն են: Պատի մյուս երեսին Չարենցի տողերն են՝ ողջույն քեզ, արեւ, ողջույն քեզ, գարուն: Վերածնության զգացողությունը, ամփոփված արեւի, ծաղիկների ու խոսքի մեջ, աստիճանաբար լցվում է նաեւ դիտողի էության մեջ:

Կամարաշարից վեր դեկորատիվ պատն է:



Մուտք դեպի հրապարակ:

Սոֆիակի քաղաքապետի ողբերգական մահը որոշ ժամանակ ընդհատեց աշխատանքները: Հրապարակի գաղափարի հեղինակին ու շինարարության հիմնադրին, սակայն, չմոռացան. կամարաշարի մի հատվածում նրան նվիրված հուշապատ առանձնացվեց: Դիմաքանդակը, որի հեղինակը Գեղարվեստի ակադեմիայի պրոֆ. Գեղիկ Բաղդասարյանն է, նույնպես արվեստի ուշագրավ ստեղծագործություն է: «Սոֆիակի զավակը» կերտվել է հռոմեացի պեսական գործիչների նկարագրով՝ ամուր, կամային ու համառ, ինչպես պատկերում էին անտիկ շրջանի արվեստագետները: Հրապարակի կենտրոնում 30 մ երկարությամբ, 11մ լայնությամբ, շատրվանների տասնյակ շիթերով ջրավազանն է. շուրջը, սանդղածեւ հարթությունների վրա, նստարաններ ու ծաղիկներ են:

Կամարաշարի հետին հատվածում բնակելի տներ են՝ նույնպես ժամանակակից լուծումներով: Այս հղացումը ոչ միայն համարձակ, այլեւ բավական յուրատիպ էր

Ճարտարապետը շինարարության ղեկավար Աշոտ Դանիելյանի հետ:

Հրապարակը դիմահայաց:

բնակարանների բոլոր ննջարանները բացվում են գեղահայաց հրապարակի վրա: Հորինվածքն ու քաղաքը մեկուսացած չեն իրարից. կամարաշար տաղավարները ծավալ-ծավալ բացվում են քաղաքի փողոցների առաջ՝ յուրօրինակ մուտքերի դեր կատարելով: Տաղավարների երկայնքով հասարակական սպասարկման օբյեկտներ են՝ խանութներ, սրճարաններ, փոստ, ցուցասրահ: Ճարտարապետական թեմատիկան հետո շարունակվում է Նարեկացու ներկայությամբ: Հեղինակը դարձյալ Գեղիկ Բաղդասարյանն է: Հետաքրքրական է, որ կամարի թեւերին տեղադրված Նարեկացու պատվանդանը նույնպես «հենված» է օդի ու լույսի վրա, ինչն այնքան հարազատ է վերածննդի երգչի ասվածային էությանը: Շատ շուտով նշվելու է «Մատյանի» 1000-ամյակը, եւ հոբելյանին նվիրված հանդիսությունները երեւի կսկսվեն Սոֆիակի նորակառույց հրապարակից: Ստեղծագործական ինքնամոռացությանը տրված ճարտարապետը հետո «հանդգնեց» հորինվածքը լրացնել քանդակային նոր մանրամասներով: Նոր քանդակների համար դրամ չկար, եւ որոշեց օգտագործել ոչ ավանդական, չշրջանառվող միջոցը՝ Գեղարվեստի ակադեմիայի այդ տարվա շնորհալի շրջանավարտների լավագույն աշխատանքները: Եվ կոմպոզիցիան լրացրին «Մեծ Մհերն» ու «Մայրությունն» քանդակը: «Մեծ Մհերը» ներկայացավ Թումանյանի նկարագրությամբ: Ճարտարապետության, քանդակի ու բանաստեղծության միաձուլումն՝ դասական մտածողության պարզությամբ ու վեհությամբ. եւ այն ամբողջ գեղեցիկը, ինչ հաջողվեց խտացնել կամարաշարի, քանդակի ու կանաչի ներդաշնակությամբ, կրկնապատկվում ու բազմապատկվում է շատրվանների ու ջրավազանի հայելային հարթությունում:

«Իմ շատ սիրած հրապարակներից մեկը՝ Ֆլորենցիայի հրապարակը, որի հեղինակը հանճարեղ Ռոմելեւսկին է, նույնպես կամարաշար տաղավարներով է, եւ գաղափարն էլ նույնն է՝ գրավել, հրապուրել դիտողին: Ես շատ գործեր ունեմ, բայց Սոֆիակն ինձ համար հատուկ նշանակություն ունի: Անհամեստություն չինչի, բայց Սոֆիակի հրապարակը պիտի դասվի համաշխարհային ճարտարապետության բարձր արժեքների կողքին», ասում է Ջիմ Թորոսյանը: Եվ իհարկե, ճարտարապետի համար շատ մեծ բան էր՝ այն իրողությունը, որ նախ սոֆիակցիները հավանեցին իր ստեղծագործությունը: Այստեղ արդեն հասցրել են հանդիսություններ կազմակերպել եւ նույնիսկ լուսանկարներ են ուղարկել ճարտարապետին: Հրապարակի բացումը կկայանա մյուս տարի, հավանաբար տարվա այն եղանակին, երբ կանաչն արթնացած ու լցված կլինի հրապարակը: Ծառաթփատեսակները հատուկ ընտրվել են Ստեփանավանի տնկարանից, ինքն անձամբ է գնացել այնտեղ: Անձամբ է հետեւում նաեւ շինարարությանը: Ծառ ու ծաղկի համայնապատկերում հաստաբուն չինարն է իշխելու, դարձյալ գյուղական միջավայրին հարազատ մնալու տրամաբանությամբ:

Միջազգային ճարտարապետության բազում հայտնի անուններ այսօր հետեւում ու հետաքրքրվում են Սոֆիակի հրապարակի ճակատագրով: Զանգահարել է Գեորգի Ստոիլովը՝ ինչպե՞ս են ընթանում Սոֆիակի աշխատանքները: Ռուսաստանի ճարտարապետական ակադեմիայի նախագահը եւ Ռուսաստանի ճարտարապետների միության նախագահը, բարձր դիրքի, բազմազբաղ անձինք, ովքեր ներկա էին Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի հանդիսություններին, նույնպես խնդրել են հրավիրել Սոֆիակի հրապարակի բացմանը՝ իրենք անպայման կգան, թեկուզ իրենց հաշվին:

Հրապարակի գեղարվեստական ընդհանուր համակարգը նաեւ արվեստի միջոցով մարդկանց էությունն ու կենցաղը մաքրագործելու ու ազնվացնելու խնդիր է լուծել: Եվ ազգային, եւ օտար ավանդական արժեքների մտերիմ փոխկապվածությանը ճարտարապետը նոր կերպարանք ու մեկնաբանություն է տվել: Այստեղ ամեն ինչ ծայրից ծայր հայերեն է ու հայեցի, բայց ազնվական մթնոլորտի ոգին, որ ներծծվում է հրապարակ մտնողի էության մեջ, եվրոպական է:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մաեստրո

Ոսկի աշուն չէ բնավ

Գույների այս հրավառությունը, հատկապես Նորֆի բարձունքում, գուցե «ոսկի աշուն» անվանեինք: Բայց Մաեստրոյի տանը մեր խմած սուրճը դառնություն ուներ իր մեջ: Իսկ դա բնավ սուրճի մեղքը չէր: Պարզապես իր ծննդյան 81-ամյակը նշելուց երկու օր հետո, 2003 թվականի սեպտեմբերի 10-ին Օհան Դուրյանը կրկին պատրաստվում էր ճանապարհ գնալու: Կրկին օտար ափեր: Որպեսզի կարողանա անել իր գործը. նվագախումբ հնչեցնի, թարգմանի (այս անգամ՝ ոչ հայերի համար) երաժշտության խորհրդավոր հնչյունները՝ Բախ, Բեթհովեն, Բեռլիոզ, Դեբյուսի, Սեն-Սանս, Ռավել...

Այս էլ որերորդ անգամ նրան խանգարում են աշխատել:

Իմ կարողությունս պատճառն է իմ դժբախտության, ասում է Մաեստրոն:- Այդպես է եղել միշտ: Դեռ Բրեժնեւի, Ֆուրցեւայի ժամանակներում Մոսկվայում Զավեն Վարդանյան անունով մեկը կար (խոսքս դիրիժոր Զավեն Վարդանյանի մասին չէ, նա լավ երաժիշտ է եւ ազնիվ մարդ): Այս Զավեն Վարդանյանն իր գործակալներն էր ուղարկում ռեսպուբլիկաները, որպեսզի «կանխվեր սովետական արվեստի դեմ ամեն մի ոտնձգություն»: Երեւան եկավ մի հաստլիկ կին, ներկա եղավ իմ համերգներից մեկին, սրանից-նրանից կարծիքներ հավաքեց ու գնալուց առաջ ինձ ասաց. «Ասված Ձեզ տաղանդ տվեց, եւ Ասվածն էլ եղավ Ձեր առաջին թշնամին»:

... Մեկ օրինակ հիշեմ. տարիներ առաջ Փարիզում սիմֆոնիկ նվագախմբի հետ փորձում էի Չայկովսկու 6-րդ սիմֆոնիան: Փորձից հետո ալտերի կոնցերտմայստերը մոտեցավ ինձ ու ասաց. «Շատ լավ միտ անի»: Տարօրինակ էր այս մարդու խոսքը: Ինչպե՞ս կարելի է լավ չանել: Սակայն հետո հասկացա, որ իր խոսքն իմաստ ուներ, որովհետեւ... կարճ ժամանակ անց գլխավոր դիրիժորն ինձ այլեւս չհրավիրեց համերգների...

1962 թվականին Օհան Դուրյանը հրավիրվում է Լայպցիգ՝ ղեկավարելու հռչակավոր «Գեւանդհաուզ» նվագախմբի համերգը: Շոստակովիչի, Ռավելի ու Բորոդինի սիմֆոնիկ ստեղծագործությունների զարմանալիորեն ինքնատիպ մեկնաբանությունը հիացրեց Լեյպցիգի եւ Բրուկների սիմֆոնիաները: Այդպիսին էր մրցույթի պայմանը: Մյուսի ծրագիրը Դուրյանն ինքն էր առաջարկել՝ Շոստակովիչի 12-րդ եւ Բեռլիոզի «Ֆանտաստիկ» սիմֆոնիաները: Եվ այն, ինչ կատարվեց այդ ժամանակ անհնարին է երեւակայել: Դա Օհան Դուրյանի աստեղա-



«... Տպավորիչ, առինքնող անձնավորություն է: Շարժումները չափավոր, սահուն: Երաժշտությունը շեշտադրում է բացառիկ նրբությամբ: Ձախ ձեռքը կերտում է, աջը՝ խստիվ ու հետեւողականորեն ղեկավարում: Արտաքուստ թվում է, թե ազատություն է ընձեռել նվագախմբին, բայց դա միայն այդպես է թվում, իրականում, ողջ կատարման ընթացքում, նա վստահորեն իր հսկող ձեռքերի տակ էր պահել նվագախումբը: Հնչյուններն ինքնաբուխ էին հոսում, բայց նա ձեւավորում էր երաժշտությունը...»:

«Սեխիշես Թագերլաս»

Այս համերգից հետո «Գեւանդհաուզի» տնօրինությունը Օհան Դուրյանին առաջարկում է մասնակցել նվագախմբի գեղարվեստական ղեկավարի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Կային եւս երկու թեկնածու, մեկը՝ Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար Կուրտ Զանդերլինգը, մյուսը՝ Բեռլինի «Կոմիշե» եւ Լայպցիգի օպերային թատրոնների երաժշտական ղեկավար Վացլավ Նոյմանը, երկուսն էլ մեծ հռչակ վայելող երաժիշտներ:

Օհան Դուրյանին առաջարկվեց «Գեւանդհաուզի» նոր համերգաշրջանի բացման ժամանակ, 1963 թվականի սեպտեմբերին, երկու համերգ ղեկավարել: Համերգներից մեկի ծրագրում անպայման պետք է լինեին Մոցարտի եւ Բրուկների սիմֆոնիաները: Այդպիսին էր մրցույթի պայմանը: Մյուսի ծրագիրը Դուրյանն ինքն էր առաջարկել՝ Շոստակովիչի 12-րդ եւ Բեռլիոզի «Ֆանտաստիկ» սիմֆոնիաները: Եվ այն, ինչ կատարվեց այդ ժամանակ անհնարին է երեւակայել: Դա Օհան Դուրյանի աստեղա-

«...Դուրյանը, ի խորոց ընթռնելով Բեռլիոզի դիվային արտիստականությունը, վերածնեց հեղինակային ստեղծագործությունն այնպես, որ նվագախումբը մեզ մատուցեց այն անխաթար ճշգրտությամբ: Սա արդյոք իրավունք չի՞ տալիս ասելու, որ Օհան Դուրյանը մեր ժամանակների ամենամեծ նվագավարների շարքում է...»:

«Միտքել Նոյեստե Նախտոռիխթեն»

Իսկապես փառահեղ անցան համերգները, ուստի բնական էր, որ համերգներից հետո «Գեւանդհաուզի» տնօրենը նրան պաշտոնապես հայտնեց. «Նվագախմբի եւ ժողովրդի ընտրյալը Դուք եք: Ակնկալում ենք Ձեր համաձայնությունը պաշտոնն ստանձնելու վերաբերյալ»:

Իհարկե, դա մեծ պատիվ էր 41-ամյա դիրիժորի համար: Սակայն անչափ կարեւոր էր Մոսկվայի համաձայնությունը: Իսկ համապատասխան ատյաններն Օհան Դուրյանին հասկացրին, որ այդ մասին մտածելն անգամ արգելվում է, թեեւ գերմանական կողմն էր դիմել մոսկովյան իշխանություններին՝ նրա համար առաջարկելով պաշտոն եւ բնակության իրավունք: Ինչո՞ւ: Օհան Դուրյանն այլախո՞հ էր: Ոչ: Նրա արվեստը հակասովետակա՞ն էր: Ոչ: Պարզապես սովետական չէր:

Պարույր Սեւակի, Մինասի, հենց իր՝ Մաեստրո Օհան Դուրյանի եւ մեր մյուս մեծերի կենսագրություններն ուսումնասիրելիս ոչ ոք չի կարող հայտարարել, որ նրանք հակասովետական արվեստագետներ են: Կրկնում եմ, նրանց արվեստը պարզապես սովետական չէ, սովետական չափորոշիչներին ու կանոններին չի համապատասխանում:

Այս եւ նմանատիպ այլ պատահարներ պարզապես կարելի է միայն «առաջին ծաղիկներ» համարել եւ հայտարարել, որ Հայաստանն ապրում էր Մոսկվայի կրնկի տակ: Առավել ցավալին հետո պետք է լիներ՝ 2001 թ. մարտին, Մոսկվայի կրնկի տակից դուրս եկած ազատ ու անկախ Հայաստանում...

- Ամեն ինչի մեջ ընկած, ամեն փորձություն տարած: Հիմա փոքր-ինչ հոգեկան խաղաղության հասե՞լ եք,- հարցնում եմ Մաեստրոյին 2003 թ. սեպտեմբերի 10-ին:

- Չէ,- ասում է,- ներսում անհանգիստ եմ: Ես թողեցի Ֆրանսիան, տուն-տեղս ծախեցի, եկա, որ ծառայեմ ժողովրդիս: Հիմա իմ այդ նպատակը հեռու, անհասանելի մի բան է: Զրկվելով ժողովրդիս ծառայելու գործից՝ երկրից երկիր եմ անցնում: Ինչ խոսք, դա մեծ դժվարություն է ինձ համար, ծանր հարված: Ո՞վ է մեղավոր, հիմա ո՞ւմ բողոքեմ, ո՞ւմ ինչ ասեմ: Կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ իմ իդեալը հեռացավ, ավերակվեց: Հիմա 81 տարեկան եմ: Ո՞վ գիտե՝ քանի տարի կմնամ ես աշխարհում... Ամենադժբախտ մարդը պիտի լինեմ, եթե օտար ափերում թաղվեմ...

Ո՞վ է մեղավոր: Մենք՝ բոլորս: Առանց բացառության:

Աբսուրդ է Օհան Դուրյանին «սերնդափոխելը»

Եթե որեւէ ժամանակ որեւէ մեկը ցանկանա ամբողջական եւ հավաստի տեղեկություններ ստանալ Օհան Դուրյանի մասին, կարող է դիմել բժիշկ Վահան Վարդապետյանին: 1991-ից սկսված այս բարեկամությանը բժիշկը նվիրված է անվերադարձ: Եվ պատահական չէ, որ Մաեստրոյի դեմ գործված ամեն չարիքի Վարդապետյանը պատասխանում է: Երբեմն՝ շատ կտրուկ:

- Աշխարհահռչակ երաժիշտ Օհան Դուրյանի հեռացումը հայ երաժշտարվեստից, ապա Հայաստանից, ամենամեծ կորուստն ու խայտառակությունն էր մեր մշակույթի պատմության մեջ: Այսպես մենք վարձահատույց եղանք արվեստին ողջ կյանքում ազնվորեն, այն էլ ի՞նչ որակով ծառայած մեր մեծագույն արվեստագետին:

ՈՐՊԵՍ ԱՂՈԹՔ

Ուրվագծեր Օհան Դուրյանի դիմանկարի համար

Մաեստրո Օհան Դուրյանը հաճախ է շեշտում (հատկապես ռեֆլեքսների առիթով), որ երաժշտական կամ կատարումը պետք է լինի աղոթք: Այո, աղոթք, որովհետեւ երաժշտության տաճար մտնող ամեն մեկը, առավել եւս երաժիշտը, պետք է աղոթի եւ հավատա իր աղոթքին: Այլապես կեղծ կլինի ամեն ինչ: Իսկ արվեստում կեղծել չի կարելի:

«Ազգ» օրաթերթի այս բացառիկը թող եւս աղոթքի խոսք լինի՝ առ երաժշտություն, առ Օհան Դուրյան:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

2003թ. սեպտեմբերի 10: Մաեստրոյի հյուրն է Սերգեյ Գալոյանը

Մեր հանդիպումներն ինձ համար ինքնատիպ դասեր էին: Ինչպես ասացի, Մաեստրոն ինքնաբուխ էր, ինքնատիպ: Նա ինձ ասաց, որ ինքն ինձ ասելիք ունի: Ինչպիսի՞ ասելիք: Ինչպիսի՞ դասեր: Ինչպիսի՞ աղոթք: Ինչպիսի՞ հարուստ կենսագրությամբ, միջազգային երաժշտագիտական բացառիկ գնահատականների արխիվով ոչ մի հայ արվեստագետ չի կարող ներկայանալ: Որքան անբարոյական ու ողորմելի պետք է լինել՝ մեծանուն երաժիշտ Օհան Դուրյանի հեռացումը «սահուն սերնդափոխություն» անվանելու համար: Քանի՞ անգամ մշակույթի այլեւս նախկին նախարար Ռոլանդ Շառոյանը կրկնեց, որ «կատարվել է սահուն սերնդափոխություն»: Իսկ մեկ անգամ ԱԼՄ հեռուստատեսությամբ Շառոյանը հայտարարեց. «25 տարեկան այնպիսի տաղանդավոր դիրիժորներ ունենք, որ զարմանալ կարելի է»: Օպերան բալետից չզանազանող մշակույթի մեր նախկին նախարարը, դժբախտաբար, դարձյալ հրապարակավ ի ցույց դրեց իր տգիտությունը: Կարդալով հռչակավոր դիրիժորների կենսագրությունները, տեսնում ենք, որ նրանք խոստովանում են, թե 60 տարեկանից հետո է միայն հնարավոր դառնալ իսկական դիրիժոր, քանի որ տաղանդից բացի դիրիժորական արվեստը պահանջում է մեծ փորձառություն: Ոչ մի երկրում, ոչ մի կառավարության եւ ոչ մեկի մտքով չանցավ սերնդափոխել Տոսկանինիին, Կարայանին, Ֆուրտվենգլերին, Բերնշտայնին: Այնպես որ, Օհան Դուրյանին հնարավոր չէ եւ ոչ մեկին իրավունք չի տրված սերնդափոխել: Դուրյանին «սերնդափոխելն» ու հեռացնելը մշակութային տեռորիզմ՝ ահաբեկչություն է: Ողբամ մեզ, հայ ժողովուրդ, զի մեր մշակույթը դարձավ շառոյանների ասպատակության ասպարեզ: Ողբամ մեզ, հայ ազգ, որ շառոյաններն են նախարար դառնում: Ամոթ մեզ՝ մեր անտարբերության, վախկոտության համար, քանզի մեր աչքի առջեւ դառնացնում, ոչնչացնում են ազգային մեծերին: Սա ես ասում եմ եւս մեկ անգամ, որպեսզի դաս լինի նորերին. այսպիսի քայլերը երբեք չեն ներվում ու մոռացվում...

Օհան Դուրյանի դեմ պայքարը բոլորի պարտությունը եղավ

Այնքան խանդավառված էր Մաեստրոն Հայաստան վերադառնալու, իր ժողովրդին ծառայելու ծրագրերով, որ վաճառեց Ֆրանսիայում գտնվող իր տունը, հրաժարվեց աշխարհի ամենահեղինակավոր նվագախմբերից մեկի հետ պայմանագիր կնքելուց եւ եկավ հայրենիք: ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանը 1999 թ. սեպտեմբերի 1-ին հրաման արձակեց, որում մասնավորապես ասված է. «Նախարարության Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի գլխավոր դիրիժոր ու երաժշտական մասի ցմահ ղեկավար նշանակել Օհան Դուրյանին: Օ. Դուրյանի աշխատանքային գործունեությունը սկսվում է 1999 թ. դեկտեմբերի 31-ից...»: ՀՀ մշակույթի նախարարության եւ Օհան Դուրյանի միջեւ կնքվում է այս գործունեությունն իրավաբանորեն իրականացնող ցմահ պայմանագիր:

Կարդանք Ռոլանդ Շառոյանի խոսքը, որը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթի 1998 թ. սեպտեմբերի 26-ի համարում. «Բազում տարիներ, երկրագնդի հանրահայտ բեմերից մոգական վարպետությամբ Դուք կախարդել եք հնչյունները: Աղոթում եմ Ձեզ առողջություն եւ նորանոր ստեղծագործական նվաճումներ ի փառս հայրենյաց եւ արվեստի»: Այո, այս խոսքերի հեղինակը Ռոլանդ Շառոյանն է:

1997-ի սեպտեմբերին Օհան Դուրյանի ծննդյան 75-ամյակի առիթով ՀՀ մշակույթի այն ժամանակվա նախարար, այժմ Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Սմբատյանն ասաց. «Սիրելի Մաեստրո, ցանկանում եմ երկա՞ր, երկա՞ր տարիների կյանք, երբեք բեմը չթողնել, որովհետեւ մեր ժողովուրդը դեռ պետք է վայելի Օհան Դուրյանի արվեստը եւ հպարտանա նրանով: Այսօր մեր իրականության մեջ դիրիժորական արվեստում Օհան Դուրյանը մեր

Մաեստրոն եւ տիկին Ալիսը՝ իրենց շնիկի Պուպիի հետ:

Մեսրոպ Մաշտոցն է: Ես երջանիկ եմ, որ Օհան Դուրյանի ժամանակակիցն եմ, հպարտ եմ, որ ապրում եմ իմ ամենասիրած քաղաքում՝ Երեւանում, որտեղ ապրում է Օհան Դուրյանը: Ես ուղղակի ինձ համարում եմ Օհան Դուրյանի երկրպագուն: Շատ սպասելիքներ ունենք նրանից: Նա շատ երիտասարդ է, որովհետեւ տարիքն արվեստագետի համար բացարձակապես նշանակություն չունի: Օհան Դուրյանն անցյալում, ներկայում եւ ապագայում մեր գործող պատմությունն է»:

«Լավ խոսքեր են, չէ՞: Իսկ ահա, 2001 թ. փետրվարի 28-ի ՀՀ մշակույթի նախարարության կոլեգիայի չարաբաստիկ որոշումից հետո ի՞նչ արեց երաժիշտ, մշակութային գործիչ, կոմպոզիտոր Արմեն Սմբատյանն Օհան Դուրյանի, հայ երաժշտական մշակույթի պաշտպանության համար: Նա իբրեւ դեսպան բազմաթիվ առիթներ է ունենում առնչվելու Հայաստանի ամենաբարձրաստիճան պաշտոնյաների հետ եւ պարտավոր էր հիշեցնել, որ պետք է համարձակություն ունենալ եւ սխալն ուղղել: Պարտավոր էր հիշեցնել, որ Օհան Դուրյանի՝ դիրիժորական արվեստում մեր Մեսրոպ Մաշտոցի նկատմամբ Շառոյանների խումբը ոճիր է գործել», ասում է Վահան Վարդապետյանը:

2001 թ. ՀՀ մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը հրամանագիր ստորագրեց. «ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության ու Օհան Դուրյանի միջեւ ստորագրված 01.09.1999 թ. թիվ 167/կ աշխատանքային պայմանագիրը լուծել 2001 թ. մարտի 27-ից՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 280-րդ հոդվածի 1.1 կետի համապատասխան: Հիմք՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության 28.02.2001 թ. թիվ 01 կոլեգիայի որոշման 1-ին կետը»:

Հարց տանք ինքներս մեզ՝ ով շահեց Օհան Դուրյանի հետ կապված այս պատմությունից, կառավարության եւ մշակույթի նախարարության հեղինակությունը բարձրացա՞վ (որ չուզեցին անգամ լսել Մաեստրոյին), ազգային օպերային թատրոնի եւ նրա երաժշտների որակն ու վիճակը բարելավվե՞ց, Գեղամ Գրիգորյանի հեղինակությունը բարձրացա՞վ: Ոչ ոք չշահեց: Օհան Դուրյանի դեմ պայքարը բոլորի պարտությունը եղավ:

Մոսկվան նվեր ստացավ

2002 թ. փետրվար-մարտ ամիսներին մոսկովյան համերգներին մասնակցել է Վահան Վարդապետյանը, լուսանկարներ արել, տեսագրել հեռարձակման պահերը: Դարձյալ լսենք նրան. «Փետրվարի 7-ին կայացած առաջին համերգից հետո, երբ Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում Օհան Դուրյանն առաջին համերգը ղեկավարեց, դահլիճում ազատ տեղեր կային: Բայց, ահա, մնացած համերգների ժամանակ 7 օր առաջ տոմսերը սպառված էին:

Առաջին համերգի ավարտից հետո Ռուսաստանի կոմպոզիտորների միության նախագահ Վլադիսլավ Կազենինը նվագախմբի երաժիշտներին հայտնեց հեռեյալը. «Մոսկվան նվեր ստացավ այսպիսի տաղանդավոր երաժիշտ: Շնորհավորում եմ բոլորիս եւ առաջին հերթին՝ նվագախմբին»: Նվագախմբի երաժիշտներն ամենաուրախն ու երջանիկն էին: «Մենք՝ երջանիկ ենք, որ աշխատելու ենք այսպիսի բացառիկ տաղանդավոր, փորձառու դիրիժորի հետ»:

Համերգներից մեկի ժամանակ Արմեն Ջիգարխանյանը կանգնած էր միջանցքում եւ հրճվանքով նայում էր տոմսարկղի մոտ գոյացած հերթին: «Միայն Օհանն այսպիսի բան կանի, ասաց նա: Այս ի՞նչ բան է. սիմֆոնիկ համերգի համար այսպիսի՞ հերթ»: Բրամսի 1-ին եւ 2-րդ սիմֆոնիաների համերգից հետո (փետրվարի 19) Ջիգարխանյանը մտավ դիրիժորական սենյակ: Անչափ հուզված էր: Գրկեց, բարձրացրեց Մաեստրոյին եւ ասաց. «Օհան ջան, գիտեմ, թե ինչեր են արել քո նկատմամբ, ամեն ինչից տեղյակ եմ: Դու շատ հզոր ես: Իսկական հանճարը դու ես, մենք քո զինվորներն ենք»:

Մարտի 11-ին Մաեստրոն ներկայացնում էր Բրամսի 3-րդ եւ 4-րդ սիմֆոնիաները: «Վերջերս Վալերի Գերգիեւը ղեկավարեց Բրամսի 4-րդ սիմֆոնիան: Դա մեզ համար գագաթնակետն էր: Բայց երբ մենք լսեցինք Բրամսի 4-րդ սիմֆոնիան Ձեր ղեկավարությամբ, զգացինք, որ այդպիսի խոր մեկնաբանություն հազիվ թե մեզ հաջողվի լսել», իրենց կարծիքն էին հայտնում համերգին ներկա գտնված երաժիշտները:

Մարտի 18-ին, ֆրանսիական երաժշտության համերգից հետո, Մաեստրոյին մոտեցավ Արամ Խաչատրյանի որդին՝ Կարենն իր որդու հետ եւ ասաց. «Սիրելի Մաեստրո, Ձեր համերգից հետո մի անգամ Արամ Իլյիչը խանդավառված եկավ տուն եւ ասաց. «Այսպիսի դիրիժոր ես տեսած չէի»: Համերգից անչափ տպավորված էր: Նույն տպավորությունն այժմ ինձ մոտ է»:

Առաջին համերգին ես նկատեցի ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին, եւ հատկապես Բեթհովենի «Ֆանտաստիկ» սիմֆոնիայի կատարման ժամանակ Գորբաչովի ապրումները շատ հետաքրքրական էին: Այնպես ապրեց Օհան Դուրյանի մեկնաբանությամբ, որ սիմֆոնիայի ավարտից հետո չգիտեր ինչպես անմիջապես մոտենալ Մաեստրոյին եւ շնորհավորել: Նա նայում էր իր կողքին նստած համերգի կազմակերպիչներին եւ ասում. «Ես դիրիժորին պետք է հանդիպեմ»: Եվ ահա, երբ Մաեստրոն պատրաստվում էր փոխվել եւ պատրաստվել համերգի երկրորդ մասին, Գորբաչովը թակեց դուռը: Ներս հրավիրեցինք: Մտավ եւ սլացավ դեպի Մաեստրոն: Գրկախառնվեցին: Ու Գորբաչովն ասաց. «Ես դժբախտաբար առաջին անգամ եմ ներկա Ձեր համերգին: Ցնցված եմ: Դուք կախարդ եք, հրաշագործ: Այսպիսի բան երբեք չէի տեսել: Այսպիսի էմոցիաներ երբեք չէի ունեցել: Տպավորություններս մեծ են: Առաջին անգամ եմ Ձեզ լսում: Ուրախ եմ, որ այսուհետեւ աշխատելու եք Մոսկվայում»:



Մաեստրոյի համերգներին հաճախ ներկա էին լինում ուրիշ նվագախմբերի երաժիշտներ, ովքեր համերգի ավարտին մոտենում էին Մաեստրոյին եւ իրենց հիացմունքն արտահայտում. «Բրամսի այսպիսի կատարումները մեզ համար հայտնություն էին, չնայած հաճախ ենք նվագել»:

Մաեստրոն հաճույքով շփվում էր մարդկանց հետ: «Որտե՞ղ եք այսպես սահուն ռուսերեն խոսել սովորել», հարցնում էին Դուրյանի կենսագրությանն անծանոթները «ֆրանսիացի դիրիժորին»: «Մինչեւ եվրոպա գնալս ԽՍՀՄ-ում այնքան եմ շրջագայել, որ սովորել եմ ռուսերեն», պատասխանում էր Մաեստրոն: «Որտե՞ղ եք ապրում», հարցնում էին: «Արվեստագետն ապրում եւ աշխատում է այնտեղ, որտեղ ստեղծագործում է», ասում էր Դուրյանը: Լինում էին նաեւ վտանգավոր, սադրիչ հարցեր. «Ինչո՞ւ թողեցիք Հայաստանը», որին Մաեստրոն պատասխանում էր անմիջական. «Որովհետեւ Հայաստանի ղեկավարությունը երաժշտություն չի հասկանում»:

Երաժշտական մենեջեր Սաշա Նամինը (Անաստաս Միկոյանի թոռը) Վարդեսի հետ:

Մաեստրո

«Դիրիժորի տեղում պետք է լինի աներեւույթ մագնիսական մի ուժ»

Շատերն են այժմ հետաքրքրվում, թե վերջին երկու տարվա ընթացքում ի՞նչ է արել Մաեստրոն, ինչո՞վ է զբաղվել:

Մեր հարցերին լիարժեք կարող էր պատասխանել Օհան Դուրյանի արվեստի երկրպագու, իսկական նվիրյալ, Մաեստրոյի մեծ բարեկամ Վահան Վարդապետյանը: Նա հավաքում է այն ամենը, ինչ կապված է Օհան Դուրյանի հետ, նրա հետ մեկնում համերգների, լուսանկարում ամեն ինչ, տեսագրություններ անում: Ծավալուն հարցազրույցից ներկայացնենք Մաեստրոյի գործունեությունը լուսաբանող հատվածները: Ի դեպ, իր յուրաքանչյուր նախադասություն, միտք, տպավորություն նա հիմնավորում է կոնկրետ հոդվածներով, լուսանկարներով, տեսագրություններով:

«2001 թ. ապրիլի 23-ին Լոս Անջելեսի հռչակավոր «Դորոթի Չենդլեր» համերգասրահում Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված համերգում Օհան Դուրյանի ղեկավարությամբ կատարվեց Վերդիի «Ռեքվիեմը»: Հաղթանակի երաժշտական ղեկավար Դավիդ Անդրեն համերգից հետո գրեց. «Նա ամբողջովին ներշնչված է երաժշտությամբ: Ինձ հանդիպած բոլոր հայտնի դիրիժորները նրա մասին միայն ու միայն բարձր կարծիքներ են հայտնում»:

Նույն՝ 2001 թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 2-ը Օհան Դուրյանը հրավիրվեց ծայնագրություններ կատարելու Մոսկվայում՝ Չայկովսկու անվան սիմֆոնիկ մեծ նվագախմբի հետ (երաժշտական ղեկավար՝ Գենադի Ֆեդոսեեւ): Անմիջական կոնտակտն ու փոխըմբռնումն ուղղակի զարմանալի էր: Փորձից հետո նվագախումբը չէր ուզում բաժանվել Մաեստրոյից: Օհան Դուրյանի ամեն մի դիտողություն երաժիշտներն ընդունում էին երախտագիտությամբ ու սիրով: Նվագախմբի տարեց երաժիշտները նույնիսկ հիշեցին, թե 25-30 տարի առաջ Դուրյանն ինչ տպավորիչ է ղեկավարել իրենց նվագախումբը:

Չայնագրությունների ժամանակ Մաեստրոն հրավիրվեց ստանձնելու Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորի պարտականությունը: Եվ ահա, 2002 թ. փետրվար-մարտ ամիսներին մոսկովյան երաժշտասեր հասարակությանը հիշարժան ու տպավորիչ համերգաշարով ներկայացավ Մոսկվայի սիմֆոնիկ նվագախումբը, ինչպես գրված է ազդագրերում՝ «Փառաբանված ֆրանսիացի դիրիժոր Օհան Դուրյան-Նարկի ղեկավարությամբ»: Բոլոր ազդագրերում, այո, Մաեստրոյի անվան դիմաց հասկանալի պատճառներով նշվեց «ֆրանսիացի դիրիժոր»:

Նվագախումբը հանդես եկավ նոր որակով ու շուքով: Եվ դա պայմանավորված էր նրանով, որ

հան Վարդապետյանն առավել կարեւոր է համարում հանգամանորեն անդրադառնալ ոչ սովորական այս դիրիժորի ոչ այնքան սովորական համերգներից ստացած տպավորություններին. «Ռուսական մամուլում եւ հեռուստատեսությամբ անմիջապես հնչեցին կարծիքներ, որ նվագախմբի արտակարգ ուսույց է Օհան Դուրյանը: Մի քանի փորձով նվագախումբը ներկայացավ նորովի: Անմիջապես զգացվեց նվագախմբի ու դիրիժորի փոխհասկացությունը: Արդյունքում՝ Բեռլիոզի «Ֆանտաստիկ» սիմֆոնիայի բացառիկ մեղեդային մատուցումը: Խորապես ընբռնելով Բեռլիոզի դիվային արտիստականությունը՝ հանդիսատեսին գամեց իր երաժշտականությամբ: Կոնցեպցիայի եւ դրամատուրգիայի առումով համերգային ծրագրերը մանրազնին մշակված էին:

Դուրյանը թողեց, որ Ռավելի գործիքավորման արվեստը մնա անխաթար եւ հնչի բնականորեն, ինքնաբուխ: Բոլոր համերգների ընթացքում առաջին նոտայից մինչեւ վերջինը նրա մեկնաբանությունները լեցուն էին ներքին լիցքով եւ լարվածությամբ: Երկօրյա փորձից հետո այսպիսի որակով հանդես գալու համար նվագախմբի երաժիշտներն, անշուշտ, պարտական էին Մաեստրոյին: Իրոք, երաժշտական վահանակի մոտ կանգնած էր ոչ սովորական, միգուցե ասել՝ բարձր պրոֆեսիոնալ մեկը, այլ՝ արտասովոր, բացառիկ խորքային, երաժշտության ամենանուրբ ծալքերը թափանցող եւ այն հանդիսատեսի խորքը հասցնող կրքոտ տեմպերամենտի եւ հուսալ քանտազիայի տեր երաժիշտը: Երաժիշտների կողմից նկատելի էր Օհան Դուրյանի հանդեպ ջերմ համակրանքը եւ անվերապահ հարգանքը: Պետք է նշել նաեւ, որ Վիեննայի, Բեռլինի ֆիլհարմոնիկների ու բազմաթիվ նշանավոր այլ նվագախմբերի հետ աշխատած անվանի դիրիժորը չափազանց մեծ հաճույքով աշխատում է ռուս երաժիշտների հետ եւ առհասարակ բարձր է գնահատում ռուս երաժիշտներին: Բրամսի 3-րդ եւ 4-րդ սիմֆոնիաների ավարտից հետո, ընդմիջելով բուռն ծափահարությունները, Մաեստրոն խրախուսեց երաժիշտներին՝ ասելով հետեւյալը. «Դիրիժորն առանց նվագախմբի զրո է»: Նշենք, որ այսքան կարճ ժամանակում նվագախումբը միանգամից այլ փայլ ու որակ ստացավ, ինչը խոստովանեցին ռուսական մամուլն ու հեռուստատեսությունը:

Փորձարարին դիրիժորը ղեկավարում է առանց փայտիկի, առանց պարտիտուրի, զուտ է, պարզապես ընչում է նվագախմբի հետ: Չնայած առաջացած տարիքին՝ Օհան Դուրյանը խստացված է ներգիա է, օժտված ոչ միայն նվագավարական վարպետությամբ ու տեխնիկայով, այլեւ ունի բոլոր հնարքները, անգամ՝ հայացքով նշաններ տալու եւ երաժիշտներից

մերգից հետո սփյուռքահայ 20 գործիչներ (եւ նրանց հետ հայրենաբնակ մտավորականներ, գրող Պերճ Զեյթունցյանն ու կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը) հանդես եկան հայտարարությամբ, որում ասվում է. «Խորին վրդովմունքով իմացանք մեծանուն Մաեստրո Օհան Դուրյանին աշխատանքից ազատելու լուրը, որը վկայում է ոչ միայն մշակութային հարցերում իշխանության ցուցաբերած բացարձակ անտարբերությունը, այլեւ բացարձակ անտեղյակությունը մեր ազգային արժեքների մասին: Լոս Անջելեսի գլխավոր համերգասրահում 3 հազար հայ եւ օտարազգի հանդիսատեսների հետ ունկնդրեցինք Վերդիի «Ռեքվիեմը»: Դա արվեստի հիասքանչ տոն էր, որ հպարտությամբ լցրեց մեր սրտերը եւ կրկին վկայեց, որ Մաեստրոն իր

Արամ Խաչատրյանի որդին Կարենը՝ եւ թոռը Արամը, համերգից հետո շնորհավորում են Վարպետին:

Մաեստրոն Վահան Վարդապետյանի եւ Ռաֆֆի Հովհաննիսյանի միջեւ:

այս տարիքում եւս ունակ է հրաշքներ գործելու»:

Նույն թվականի նոյեմբերի 3-ին ամերիկյան Տուլարե (Ֆրեզնո) քաղաքում Մաեստրոն ղեկավարեց համերգ՝ ծրագրում Բեթհովենի թիվ 3 սիմֆոնիան, Ալան Հովհաննեսի Չուրակի կոնցերտը եւ իր «Կոմիտասականը»: Նվագախմբի գլխավոր դիրիժորի պարտականությունը: Եվ ահա, 2002 թ. փետրվար-մարտ ամիսներին մոսկովյան երաժշտասեր հասարակությանը հիշարժան ու տպավորիչ համերգաշարով ներկայացավ Մոսկվայի սիմֆոնիկ նվագախումբը, ինչպես գրված է ազդագրերում՝ «Փառաբանված ֆրանսիացի դիրիժոր Օհան Դուրյան-Նարկի ղեկավարությամբ»: Բոլոր ազդագրերում, այո, Մաեստրոյի անվան դիմաց հասկանալի պատճառներով նշվեց «ֆրանսիացի դիրիժոր»:

Նվագախումբը հանդես եկավ նոր որակով ու շուքով: Եվ դա պայմանավորված էր նրանով, որ

Ռուսաստանում Մ. Նահանգների դեսպան Ալեքսանդր Վերշբոուն եւ Սաս Նամինը եկել էին Մաեստրոյին շնորհավորելու:

դիրիժորական վահանակի առջեւ կանգնած էր հսկայական փորձառությամբ Վարպետը:

Համերգաշարը սկսվեց ֆրանսիական երաժշտությամբ: Փետրվարի 7-ին Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում կատարվեցին Բեռլիոզի «Ֆանտաստիկ» սիմֆոնիան, «Ամառային գիշերներ» վոկալ շարքը, Ռավելի «Բոլերոն»:

Մարտի 18-ին, դարձյալ կոնսերվատորիայի մեծ դահլիճում, կատարվեցին Դեբյուսիի «Նոկտյուրնը», Ռավելի «Վալսը», Սեն-Սանսի թիվ 3 սիմֆոնիան:

Մայրաքաղաքի մյուս հեղինակավոր՝ Չայկովսկու անվան համերգասրահում փետրվարի 19-ին եւ մարտի 11-ին հնչեցին Բրամսի 4 սիմֆոնիաները:

Ծրագրում ներկայացված էին տեղեկություններ Դուրյան-Նարկի խիստ հարուստ կենսագրականից, համեմատություններ Արթուր Նիկիշի, Հերբերտ ֆոն Կարայանի, Բերտայնի եւ Ստոկովսկու հետ, Մաեստրոն հռչակված էր որպես «Արեւելյան Եվրոպայի Տոսկանինի»: Ուստի մոսկովյան խստապահանջ հանդիսատեսի պահանջներն ու սպասելիքները, բնականաբար, շատ մեծ էին դիրիժորից: Ի պատիվ Օհան Դուրյանի, համոզված նշենք, որ այդ ակնկալիքները լիովին արդարացան:

Խուսափելով մանրամասն, ստերեոտիպ վերլուծականից, համերգներին ներկա գտնված Վարդապետյանը նշեց, որ Վիեննայի, Բեռլինի ֆիլհարմոնիկների ու բազմաթիվ նշանավոր այլ նվագախմբերի հետ աշխատած անվանի դիրիժորը չափազանց մեծ հաճույքով աշխատում է ռուս երաժիշտների հետ եւ առհասարակ բարձր է գնահատում ռուս երաժիշտներին: Բրամսի 3-րդ եւ 4-րդ սիմֆոնիաների ավարտից հետո, ընդմիջելով բուռն ծափահարությունները, Մաեստրոն խրախուսեց երաժիշտներին՝ ասելով հետեւյալը. «Դիրիժորն առանց նվագախմբի զրո է»: Նշենք, որ այսքան կարճ ժամանակում նվագախումբը միանգամից այլ փայլ ու որակ ստացավ, ինչը խոստովանեցին ռուսական մամուլն ու հեռուստատեսությունը:

Փորձարարին դիրիժորը ղեկավարում է առանց փայտիկի, առանց պարտիտուրի, զուտ է, պարզապես ընչում է նվագախմբի հետ: Չնայած առաջացած տարիքին՝ Օհան Դուրյանը խստացված է ներգիա է, օժտված ոչ միայն նվագավարական վարպետությամբ ու տեխնիկայով, այլեւ ունի բոլոր հնարքները, անգամ՝ հայացքով նշաններ տալու եւ երաժիշտներից նրբություններ կորզելու համար: Երբեմն բոլորովին անշարժ, նույնիսկ չափ չի տալիս, սակայն ներգործում է երաժիշտների վրա եւ նրանց ներշնչում:

«Դիրիժորական արվեստը մինչեւ այսօր դեռեւս մութ է, ասում է Մաեստրոն: Սա ասել է նաեւ ռուս դիրիժոր Եվգենի Սվետլանովը: Ցավում եմ դրա համար: Դա ո՞ւմ մեղքն է, չգիտեմ: Բայց այդպես է: Դիրիժորը հասկացվել է այսպես՝ պիտի բացահայտի գործի էությունը, չափ տա ինքը, եւ երաժիշտներն էլ իրենց նոտաները նվագեն: Դա պրիմիտիվ բացատրություն է: Ես պահանջում եմ, որ դիրիժորը ոչ միայն բացահայտի կոմպոզիտորի ստեղծագործությունը, այլ անգամ փոխարինի կոմպոզիտորին: Սա շատ խորը եւ պատասխանատու արտահայտություն է: Դիրիժորը պետք է այնքան լավ տիրապետի գործը, որ իսկապես այդ դերին փոխարինի կոմպոզիտորին: Այդպիսի դիրիժոր ես կարող եմ համարել Կարայանին եւ Տոսկանինիին: Ես շատ խստապահանջ եմ այդ հարցում: Դիրիժորի տեղում պետք է լինի մագնիսական մի գործիք, անգամ՝ անտեսանելի մագնիսական ուժ, աներեւույթ ուժ, ճառագայթող ուժ: Այնքան մեծ պետք է լինի դիրիժորը, որ չերեւա»:

Ահա հենց այս աներեւույթ, ճառագայթող, մագնիսական ուժն են տեսնում Մոսկվայում Օհան Դուրյանի համերգներին ներկա գտնվողները:

«Դուրյանը հանճար է»

2002 թվականի մոսկովյան համերգներն իսկապես անմոռանալի են եղել ունկնդրի համար: Մենք ենք մեկ անգամ ականատեսը եղանք Օհան Դուրյանի արվեստի հրավառության: Դրա վկայություններն են հեռուստատեսության եւ մամուլի արձագանքները:

Օհան Դուրյանի ղեկավարած ամեն համերգից հետո հեռուստատեսությամբ, հատկապես «Կուլտուրա» ծրագրով, խոր, չափազանց մանրամասն մեկնաբանություններ էին տրվում: Այսպես.

«Ֆրանսիացի փառաբանված դիրիժոր Օհան Դուրյանը Չայկովսկու անվան համերգասրահում ղեկավարեց Բրամսի թիվ 1 եւ թիվ 2 սիմֆոնիաները: Այդ երեկոն մեծագույն նվեր էր Բրամսի երաժշտության իսկական սիրահարների համար: Օհան Դուրյանը ռեկորդակիր է. ղեկավարել է ավելի քան 110 նվագախումբ: Այս անգամ Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի հետ համագործակցությունը լինելու է տեւական: Դուրյանը մեզ հետ է, ինչը անչափ հաճելի է ռուսաստանյան ունկնդրի համար»:

Մեջբերենք մի քանի հատված ռուսաստանյան մամուլից:

«Երեկ մայրաքաղաքում ելույթ ունեցավ աշխարհի լավագույն դիրիժորներից մեկը՝ Օհան Դուրյանը, ղեկավարելով Մոսկվայի սիմֆոնիկ նվագախումբը: Նա կենդանի դասական է, ում հաճախ կարելի է համեմատել Կարայանի, Նիկիշի, Բերնշտայնի հետ եւ անվանել «Արեւելյան Եվրոպայի Տոսկանինի»: Մաեստրո Դուրյանը կոլորիտային ֆիգուրա է» (Ալեքսանդր Շուլլով, «Ռոսիսկայա գազետա», 8 փետրվարի, 2002 թ.):

Մոսկովյան «Նովոյե վրեմյա» շաբաթաթերթը 2002 թվականի փետրվարի 17-ի համարում տպագրված մեկնաբանությունը վերնագրել է. «Էրիգոդ հանճարի կյանքից»: «Էյնշտեյնին արտաքնապես նման դիրիժոր Օհան Դուրյանը ղեկավարում էր Հեկտոր Բերլիոզ: Անսովոր էր մեկնաբանությունը, իսկ անսովորությունն այն է, որ Դուրյանը, ինչպես եւ Էյնշտեյնը, հանճար է, իսկ հանճարները նախ ինչ-որ հայտնագործություն են անում, ապա հեղինակում են այդ հայտնագործությունը: Դուրյանը համարվում է անչափ բարդ բացառելի «ունիվերսալիզմ» համակարգի ստեղծողը: Այդ համակարգի իմաստն այն է, որ հիմնված է այնպիսի ռիթմերի վրա, որոնց կարելի է հարմարեցնել ամենահնարավոր ոճերի բացարձակապես ցանկացած երաժշտություն: Օհան Դուրյանը 80 տարեկան է: Նա ծնվել է Երուսաղեմում: Նրա ուսուցիչներն են եղել դիրիժորներ Ռոժե Դեզոնյերն ու Ժան Մորտեռոնը: Առաջին անգամ ելույթ ունենալով Վիեննայում, 1947 թվականին Դուրյանն ստացել էր Հերբերտ ֆոն Կարայանի երաշխավորությունը աշխատելու Բեռլինի եւ Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ: Դրանից հետո նա ղեկավարել է 100-ից ավելի նվագախմբեր: Նա ելույթներ է ունեցել Օյստրախի, Կոգանի, Ռոստրոպովիչի, Սիտկովեցկու, Նավարրոյի, Տերինգի, Ռիկկեյի հետ»:

«Իսրայելի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ նրա ղեկավար Զուբին Մեհթայի ելույթից հետո դեռ չեն մարել օվացիաները, բայց երաժշտական Մոսկվան պատրաստվում էր ունկնդրել եւս մեկ աստղի՝ ֆրանսիացի վարպետ Օհան Դուրյանին, որն այս ամառ ընդունել է Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարությունը եւ անմիջապես ծեռնամուխ եղել նախապատրաստելու հզոր ծրագիր՝ Բեռլիոզ, Ռավել, Սեն-Սանս, Դեբյուսի», գրում է Տատյանա Դավիդովան «Տրուդ» թերթի 2002 թ. փետրվարի 5-ի համարում:

«Համերգն անցավ մեծ հաջողությամբ: Հանդիսությունը հատկապես ցնծությամբ ընդունեց Ռավելի «Բոլերոն», չնայած դիրիժորի «վարագիծը» զարմացրեց, իսկ շատերին շոկի մեջ գցեց, որովհետեւ անսովոր էր տեսնել առանց փայտիկի եւ պարտիտուրի, այն էլ առանց մարմինը շարժելու» («Մոսկովսկայա պրավդա», 16-ը փետրվարի, 2002 թ., Իրինա Շվեդովա):

Քանի դեռ ուշ չէ

2002 թվականի սեպտեմբերի 8-ին (Մաեստրոյի ծննդյան 80-ամյակի օրը) Ռուսաստանի մշակույթի նախարարությունը կազմակերպեց համերգ: Այն կայացավ Մոսկվայի Կոնսերվատորիայի մեծ դահլիճում: Մաեստրոն որոշեց կատարել Վերդիի «Ռեքվիեմը» եւ համերգը նվիրել Ռուսաստանում եւ Ամերիկայում ահաբեկչության զոհերի հիշատակին: Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Ալեքսանդր Վերշբոուն համերգն սկսվելուց առաջ ներկայացրեց ծրագիրը եւ ավելացրեց, որ սեպտեմբերի 8-ը Մաեստրոյի ծննդյան օրն է, որի առիթով էլ ջերմորեն շնորհավորեց նրան: Նվագախմբի նախկին գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Կոնստանտին Կրիմեցը անակնկալ մատուցեց՝ ղեկավարելով Մոցարտի Ջութակի կոնցերտը, նվիրելով այն Մաեստրոյի 80-ամյակին: Ապա երկարետեւ, ջերմ ծափահարությունների տակ բեմահարթակ դուրս եկավ Օհան Դուրյանը: Նա պետք է ղեկավարեր Վերդիի «Ռեքվիեմը»:

Նման ծավալուն ստեղծագործությունը Մաեստրոն պատրաստեց 2 փորձի ընթացքում: Դեռ փորձերի ժամանակ նա նկատողություն էր անում երգչախմբի անդամներին, մենակատարներին, ասելով՝ «Սա ռեքվիեմ է, ոչ թե օպերա: Այն պետք է հնչի իբրեւ աղոթք զոհվածների հիշատակին»: Եվ այս երաժշտները, որ բազմիցս կատարել էին մեծն իտալացու այս հանճարեղ ստեղծագործությունը, շնորհակալությամբ ու երախտագիտությամբ էին ընդունում Մաեստրոյի դիտողությունները եւ փորձերից հետո միայն ծափահարում, շնորհակալություն էին հայտնում Մաեստրոյին:

Համերգին մասնակցում էին Ռուսաստանի Ա. Յուրլովի անվան ակադեմիական երգչախմբի արտիստները (պրոֆեսոր Ստանիսլավ Գուսեւի ղեկավարությամբ), Մարիինյան թատրոնի մենակատարներ, միջազգային մրցույթների դափնեկիրներ Իրմա Գիգոլաշվիլին (սոպրանո), Նատալյա Եվստաֆեւան (մեցցո-սոպրանո), Դանիել Շտոդան (տենոր), Իլյա Բաննիկը (բաս):

«Խոսքերով հնարավոր չէ նկարագրել այն, ինչ կատարվեց Կոնսերվատորիայի մեծ դահլիճում,- ասում է Վահան Վարդապետյանը: - Այս համերգին պետք էր ուղղակի ներկա լինել: Վերդիի ստեղծագործությունը հնչեց իսկապես որպես աղոթք: Իմ շուրջը կանգնած էին ամերիկյան դեսպանատան աշխատակիցները: Այո, նրանք հոսնկայս ունկնդրեցին համերգը: Դա իրոք աղոթք էր»:

Ամբողջ գործը Մաեստրոն ղեկավարեց առանց պարտիտուրի: Սա բոլորի համար ապշեցուցիչ էր (չմոռանանք, որ երկու տարի առաջ Հայաստանում որոշ «մասնագետներ» հայտարարեցին, որ Մաեստրոյի հիշողությունը վատ է):



Արմեն Ջիգարխանյանն իր հիացմունքն է արտահայտում Վարպետին:

Այսպես է մեկնաբանել «Կուլտուրա» թերթը այդ համերգը.

«Մոսկվայում բազմիցս կատարվում է Վերդիի «Ռեքվիեմը», կատարվում է ամեն տարի: Սակայն միշտ առաջին պլան է մղված եղել Վերդիի օպերային մեկնաբանությունը: Առաջին անգամ այն հնչեց յուրովի՝ Օհան Դուրյանին բնորոշ, իբրեւ զսպված ողբ, աղոթք: Քարացել էր ամբողջ դահլիճը: Պետք է արժանին մատուցել դիրիժորին, երաժիշտներին՝ իրենց բարձր պրոֆեսիոնալիզմի համար: Օհան Դուրյանի մեկնաբանությամբ այս ծավալուն ստեղծագործությունը հնչեց իբրեւ միասնական, կուռ տրամաբանություն ունեցող, լայնածավալ մի մեկնաբանություն»:

Անշուշտ, դժվար էր Մաեստրոյի համար, որովհետեւ նա իր ծննդյան 80-ամյակը նշում էր ոչ թե հայրենիքում, ոչ թե Երեւանում, այլ Հայաստանից դուրս: Թեեւ Հայաստանի իշխանությունները, գոնե ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունն կոչվող սահմանափակ պատասխանատվությամբ անհատական ձեռնարկությունը «մոռացան» հիշել մեր ժամանակների հայ մեծագույն երաժշտի հոբելյանը, բայց եղան մարդիկ, ովքեր չմոռացան աղոթք արտասանել:

Մոսկվայում Մաեստրոն ստացավ շնորհավորական շատ ու շատ հեռագրեր նաեւ Հայաստանից:

«Ամենասիրելի Մաեստրո,- գրել է Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանը: - Ընդունեցեք, խնդրեմ, իմ ջերմագին շնորհավորանքները՝ Ձեր ծննդյան 80-ամյակի առթիվ: Ձեզ՝ մեծանուն Հայ եւ արտաքսագործ հանճար, մաղթում եմ քաջառողջություն եւ կենսահաստատ ուժ, որպեսզի մեր քաղաքակրթությանն ու ժողովրդին Ձեր բարձրագույն ծառայությունը տեւապես շարունակեք՝ տարիներ հետո նվիրումի այդ ջահն անմնացորդ փոխանցելով հայոց նոր սերնդին: Վարձդ միշտ ի կատար»:

Օհան Դուրյանը չունի ոչ մեկիս գնահատականի կարիքը: Նրա գնահատականը իր արվեստն է, իր կենսագրությունը, անցած փառավոր ուղին: Մեծարելով Դուրյանին՝ ինքներս մեզ ենք մեծարում: Ոչինչ ավելի: Տեղին է հիշատակել այն մշավորականների անունները, ովքեր միշտ եւ այսօր էլ հիացած են Օհան Դուրյանի արվեստով եւ չվախեցան դատապարտել Մաեստրոյի հանդեպ կատարվածը. Արաս Դավթյան, Գոհար Գալաջյան, Տիգրան Հեքեքյան, Արամ Ղարաբեկյան, Ռուբեն Մաթեւոսյան, Խորեն Պալյան, Կարպիս Սուրենյան, Ռաֆայել Ղազարյան, Հարություն Թոփիկյան, Վիլի Սարգսյան, Պերճ Ջեյթունցյան, Ալեքսանդր Հարությունյան, Մելանյա Աբովյան (ԱՄՆ), Լյուսի Իշխանյան (ԱՄՆ), Սուսաննա Մելդոնյան (Ֆրանսիա), Անգինե Մուրադյան (ԱՄՆ)...

Կարելի է սիրել կամ չսիրել այս կամ այն արվեստագետին: Բայց հայ մշակույթի համար պիտի դողանք բոլորս: Անցած տասնամյակում պետք էր մշակութային ճիշտ քաղաքականություն վարել: Նա, ով պետք է երգեր՝ չի երգում (Գեղամ Գրիգորյան), նա, ով կազմակերպչական հզոր ջիղ ունի՝ այդ գործին չէ (Լորիս Ճգնավորյան), նա, ով փայլուն բեմադրիչ է (Տիգրան Լեւոնյան)՝ ո՞ւր է այժմ: Ամեն մեկը, եթե իրենց տեղում լինեին, հայ երաժշտական արվեստը շատ բանով կշահեր:

Քանի դեռ ուշ չէ, քանի դեռ ուշ չէ՝ պիտի մեզ շտկենք:

Երգչուհի Արաս Դավթյանը եւ բժիշկ Վահան Վարդապետյանը Վարպետի մոտ:

РОССИЙСКАЯ ГАЗЕТА
ТРУД
КУЛЬТУРА
НОВОЕ ВРЕМЯ

Կենտրոնական հետախուզության վարչությունն ամեն տարի հրատարակում է մի զեկուցագիր, որը կոչվում է «Համաշխարհային փաստագիրք»: Դրանում բավական համառարփակ ձևով ներկայացվում են աշխարհի ավելի քան 200 երկրների եւ տարածքների աշխարհագրության, տնտեսության, բնակչության, զինվորականության, կառավարության եւ տրանսպորտի վերաբերյալ տվյալներ: Այդ տվյալները տեղադրված են լինում նաեւ ԿՀՎ-ի վեբսայթում՝ http://www.cia.gov/cia/publications/factbook/geos/am.html

ԿՀՎ-ն հաստատում է վիճելի տարածքների հայկական պատկանելությունը

Չնայած առանձնապես լուրջ գաղտնիքներ չեն բացահայտվում այս փաստաթղթում, այնուամենայնիվ, հետաքրքրական է տեսնել, թե ինչպես է ԿՀՎ-ն ներկայացնում որոշակի փաստեր եւ տվյալներ Հայաստանի, Ղարաբաղի, Ադրբեջանի եւ Թուրքիայի վերաբերյալ:

«Հայաստան» գլխում բերված են հետեւյալ տեղեկությունները. «Հայաստանը հպարտանում է, թե առաջին երկիրն է, որ պաշտոնապես ընդունել է քրիստոնեությունը (4-րդ դարի սկզբին)՝ կարճ ժամանակահատվածում ինքնավարություն վայելելով հանդերձ, դարեր շարունակ Հայաստանը գտնվել է տարբեր՝ հռոմեական, բյուզանդական, արաբական, պարսկական եւ օսմանյան կայսրությունների տիրապետության ներքո: Միացել է Ռուսաստանին 1828-ին, իսկ ԽՍՀՄ-ին՝ 1920-ին: Հայերը շարունակում են հակամարտության մեջ մնալ մահմեդական Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ, հիմնականում հայերով բնակեցված մի տարածք, որը 1920 թ. Մոսկվան փոխանցել է Խորհրդային Ադրբեջանին: Հայաստանն ու Ադրբեջանն այդ տարածքի համար սկսել են կռվել 1988-ին: Կռիվը սաստկացել է երկու երկրների՝ Խորհրդային Միությունից 1991 թ. անկախություն ձեռք բերելուց հետո: 1994-ի մայիսին, երբ զինադադար հայտարարվեց, հայկական զորքերը գրավել էին ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլեւ բուն Ադրբեջանի տարածքի զգալի մասը: Երկու կողմերի տնտեսությունը վնասվել է խաղաղ կարգավորմանը նպաստակաուղղված զգալի առաջընթացի հասնելու իրենց անկարողության պատճառով»:

Հետաքրքրական է նկատել, որ ԿՀՎ-ն Հայաստանի վերաբերյալ իր նախնական տեղեկության ավելի քան երկու երրորդը հատկացրել է Ղարաբաղին՝ հատուկ ուշադրություն ցույց տալով այդ տարածքի նկատմամբ: Նշելով, որ Մոսկվան Ղարաբաղը «փոխանցել է» Ադրբեջանին, ԿՀՎ-ն հաստատում է Հայաստանի դիրքորոշումը, որ Ղարաբաղը պատմականորեն եղել է Հայաստանի մի մասը: Այնուհետեւ Ղարաբաղի շուրջ գտնվող տարածքը «բուն Ադրբեջան» կոչելով՝ ԿՀՎ-ն վերահաստատում է, որ Ղարաբաղն Ադրբեջանի մաս չի կազմում:

Առավել հետաքրքրական է «Վեճեր» խորագրի ներքո գրված հետեւյալ պարբերությունը. «Հայաստանը պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայ անջատողականներին, եւ զինվորականությունը գրավյալ է պահում Ադրբեջանի տարածքի 16 տոկոսը: ԵԱՀԿ-ն շարունակում է միջնորդական առաքելությունը: Թուրքիայի հետ սահմանը մնում է փակ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեւանքով: Նվազել են Թուրքիայում նախկին հայկական հողերի նկատմամբ ավանդական պահանջները: Վրաստանի Ջավախքի շրջանի էթնիկապես հայ խմբավորումներն առավել մեծ ինքնավարություն եւ Հայաստանի հետ առավել սերտ կապեր են հայցում»:

Այս պարբերությունը երեք սխալ տեղեկություն է պարունակում. ա) Հայաստանը չի գրավել Ադրբեջանի 16 տոկոսը: Ղարաբաղի հայերն ազատագրվել են Ադրբեջանի բռնակալությունից, բ) Ղարաբաղի հայերը «անջատողականներ» չեն: Նրանք ինքնորոշում են հայցում, բնական մի իրավունք, որը ճանաչված է ՄԱԿ-ի կողմից, գ) հակառակ այս եւ «փաստագրքի» նախորդ հրապարակումների պնդումների, Թուրքիայում պատմական Հայաստանի հողերի նկատմամբ պահանջատիրությունը չի նվազել: Սեւրի դաշնագիրը ճանաչել է, որ Թուրքիայի այդ տարածքները հայկական հողեր են: Առավել ընդարձակ Հայաստանի սահմաններն ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնն է գծել: Մխիթարական է, որ ԿՀՎ-ն ճանաչում է այդ տարածքների հայկական պատկանելությունը՝ գրելով «նախկին հայկական հողեր Թուրքիայում» բառերը:

ԿՀՎ-ի մեկ ուրիշ փաստաթղթում («Հակամարտությունների կարգավորումը Կովկասում եւ Մոլդովայում: Առաջիկա քայլերի հեռանկարներ») ականավոր մասնագետներ դեմ են արտահայտվել այն մարդկանց կարծիքին, ովքեր պնդում են, որ ղարաբաղյան հակամարտության հարցում ժամանակն Ադրբեջանի օգտին է: Նրանք հետեւյալ շատ հետաքրքրական նկատառումներն են մատնանշել. «Որոշ դիտորդներ հայկական դիրքերում զգալի ամրություն են նկատում, քանի որ հայերն այդ տարածքը գրավել են եւ ժամանակի ընթացքում կարող են «դե ֆակտո» ամրագրել: Չնայած Ադրբեջանն ունի տնտեսական առավելություն, այդ բնագավառի ցուցիչները որոշիչ գործոն կարող են չհանդիսանալ առնվազն երեք պատճառներով. ա) Ադրբեջանի տնտեսության համեմատական հզորությունը նաեւ խոցելի է դարձնում երկիրը, քանի որ հայերը շատ լավ հասկանում են, որ մեկ այլ պատերազմ խանգարելու է նավթի տեղափոխմանը, նվազեցնելու է տարածաշրջանային ներդրումները եւ կասեցնելու է Ադրբեջանի տնտեսական աճը: բ) Իրենց տառապալից պատմությունը հիմք ընդունելով՝ հայերից շատերն այն եզրակացությանն են հանգել, որ ապահով չեն կարող ապրել Ադրբեջանի տարածքում եւ հետեւաբար վճռական են տրամադրված: գ) Հայերը պատրաստ են տառապանքներ տանել: Ադրբեջանի կարծրեւայինների ճառերը հիշ բանի կարող են հասնել: Դժվարությունն այն է, որ երկու կողմերն էլ համարում են, որ ժամանակն իրենց օգտին է շարժվում: Երկու կողմերն էլ սխալվում են: Բայց դժվար է կողմերից յուրաքանչյուրի համար փոխադարձ անվստահությունից ու վիրավորանքներից այն կողմ նայել»:

Հայերը պետք է ամբողջ աշխարհին հստակ հասկացնեն, որ Թուրքիայում պատմական հողերի եւ Ղարաբաղի նկատմամբ պահանջատիրությունն այսօր էլ, ինչպես երբեւէ, ուժի մեջ է եւ բոլորովին չի «նվազել»:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆորնիա կուրիեր»

«Իրաքում կռվում են սաուդցի 5000 մոջահեդներ»

Լոնդոնում բնակվող սաուդցի այլախոհ Մուհամմեդ ալ Մասարին հայտարարել է, որ Իրաքում ամերիկացի զավթիչների դեմ մարտնչում են իր երկրի հազարավոր քաղաքացիներ: Այդ մասին տեղեկացնում է Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը:

Նրա խոսքերով, Բաղդադում ապստամբական գործողությունների թիվը հետզհետե ավելանում է: «Սաուդյան Արաբիայից մեկնած մոտ 5000 մոջահեդներ Բաղդադում են, եւ նրանց կմիանան շատերը մահմեդական ու արաբական աշխարհից», ասել է Մուհամմեդ ալ Մասարին: «Այդ մարդիկ արդեն սկսել են ջանքեր գործադրել ամերիկացի իմպերիալիստներին Իրաքից վռնդելու համար, բայց մեր տեսածը սառցալեռան կատարն է միայն», ընդգծել է նա:

Ալ Մասարին վստահ է, որ հակաամերիկյան ահաբեկչություններ կծավալվեն նաեւ Սաուդյան Արաբիայում, որտեղ ներկայումս հակաարեւմտյան եւ հակակառավարական տրամադրությունների աճ է նկատվում:

Նա հայտնել է, որ վերջին 10 տարում սաուդցի մոջահեդները մարտիկներ են պատրաստել Չեչնիայում, Քաշմիրում կռվելու, մահմեդական աշխարհում ամերիկացիների դեմ պայքարելու համար:

Մուհամմեդ ալ Մասարին «Ալ Ջազիրայի» թղթակցին հավաստիացրել է, թե Սաուդյան Արաբիայում ժողովուրդն այնքան դժգոհ է երկրի արեւմտամետ քաղաքականությունից, որ վտանգ է սպառնում նույնիսկ թագավորական ընտանիքին: Անձամբ ինքը Լոնդոնում մնալով մտադրվել է հիմնել ընդդիմադիր կուսակցություն, որն ապագայում պետք է արմատական բարեփոխումներ իրականացնի Արաբիայում:

Սաուդցի այլախոհի հայտարարությունները թույլ են տալիս ավելի լավ պատկերացնել Իրաքում տիրող իրավիճակը եւ ուժերի հարաբերակցությունը: Անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերի բարձրաստիճան զինվորականներից մեկն ավելի վաղ հայտարարել էր, թե «Իրաքում կռվում են 200-400 օտարերկրացի մարտիկներ, որոնց միջոցով իրականացվում են ահաբեկչությունների ֆինանսավորումը, ծրագրումը եւ նյութատեխնիկական ապահովումը»: Այժմ տեսնում ենք, որ Իրաքում միայն սաուդցի մարտիկների թիվը 5000 է:

Ուստի զարմանալի չէ, որ վերջին շաբաթվա ընթացքում Իրաքում օրական 33 հարձակում է ձեռնարկվում ամերիկյան ուժերի դեմ՝ նախորդ շաբաթվա 26-ի դիմաց: «Ազգի» երեկվա համարում հաղորդվեց, որ Իրաքի պատերազմի ավարտից հետո ամերիկացի ավելի շատ զինծառայողներ են սպանվել, քան պատերազմի օրերին (համապատասխանաբար 117 եւ 115): Թերթի նույն համարում տպագրական սխալի հետեւանքով նշվել է, թե Բաղդադից հյուսիս՝ Բալադ քաղաքի շրջանում սպանվել են 25 ամերիկացիներ: Մինչդեռ Ֆրանսպրեսի եւ Ինտերֆաքսի ծգտված տվյալների համաձայն, այնտեղ ամերիկյան գերադիակական «Աբրամս» տանկի ոչնչացման հետեւանքով սպանվել են 2 ամերիկացիներ եւ մեկն էլ վիրավորվել է: Այդ տանկն ունի 120 միլիմետրանոց թնդանոթ եւ թվային կառ:

Պ. Ք.

ՀԱԿԻՐՃ

Հարձակումներ Վրաստանի պատգամավորության թեկնածուների վրա

Երեկ գիշեր անհայտ անձինք ատրճանակից երկու անգամ կրակել են «Նոր աջեր» ընդդիմադիր դաշինքից Աժ պատգամավորության թեկնածու Զվիադ Չոխելիի վրա: Սակայն թեկնածուն չի տուժել, քանի որ եղել է բանակային զրահաբաճիկով: Թբիլիսիի ոստիկանության օպերատիվ հերթապահն ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել է, որ մահափորձից հետո անհայտ անձինք այրել են Չոխելիի ավտոմեքենան: Տվյալ փաստի առթիվ սկսվել է քննություն:

Հաղորդվում է նաեւ, որ նախօրեին Վրաստանի արեւմուտքում՝ Սաչխերե շրջկենտրոնի մոտակայքում չպարզված հանգամանքներում անհետացել է «Ժողովրդավարական վերածնության դաշինք» նախընտրական բլոկից պատգամավորության թեկնածու Թեմուր Գոխաձեն: Չորեքշաբթի երեկոյան նրա ավտոմեքենան հայտնաբերվել է Սաչխերեից 5 կմ հեռու, ամայի ճանապարհի վրա:

Ինտերֆաքս գործակալության տվյալներով, մեքենայում եղել են թեկնածուի բանալիները եւ վարորդական իրավունքը: Ոստիկանությունում չեն բացառում Գոխաձեի առեւանգումը: Անհետացած թեկնածուի որոնումները շարունակվում են:

ՆԱՏՕ-ն ռազմական չի ստեղծի Մերձբալթիկայում

Երկօրյա աշխատանքային այցով Մոսկվա ժամանած ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնը հայտարարել է, թե Հյուսիսատլանտյան դաշինքը ռազմականներ չի ստեղծի բալթյան երկրների տարածքում: «Մեր գլխավոր գերակայությունն է միավորել Եվրոպայի բոլոր երկրները Ռուսաստանի հետ մեկտեղ, որպեսզի դրանք կարողանան զարգացնել ճկուն ու արդյունավետ ռազմավարություն եւ իրենց զինված ուժերն ուղարկել այնտեղ, որտեղ հարկ լինի», հայտարարել է Ռոբերտսոնը, ավելացնելով, որ բալթյան պետություններին եւ մյուս երկրներին վերաբերող բոլոր հավաստիացումները հստակորեն արձանագրված են ՆԱՏՕ-ի հիմնարար փաստաթղթում եւ Հռոմի հռչակագրում:

Կալիֆորնիայում հրդեհները մարելիս հրեջ է զոհվել

Կալիֆորնիայի նահանգի հարավում արդեն մեկ շաբաթից ավելի շարունակվող անտառային հրդեհները նոր վնասներ են պատճառել: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ հրդեհները մոտակայքում: Երեք տուժածները եւ զոհը աշխատանքի պահին շրջապատված են եղել բոցերով եւ չեն հաստատել հեռանալ հրդեհի գոտուց:

Անտառային հրդեհներից զոհված անձանց թիվն արդեն հասել է 20-ի:

հանգցնելիս առաջին զոհն են տվել Նովաբ քաղաքի հրեջ ծառայության աշխատողները: Հրեջներից մեկը զոհվել է, երեքն էլ վերքեր են ստացել:

Միջադեպը տեղի է ունեցել Սան Դիեգոյի օկրուգի Ջուլիան քաղաքի մոտ: Վերջին երկու զոհերի դիակները հայտնաբերվել են Սան Դիեգոյից ոչ հեռու գտնվող հնդկացիական ռեզերվացիայում: Հրդեհների դեմ պայքարում է ավելի քան 12 հազար մարդ: Մինչեւ օրս հրդեհ է դարձել արդեն 2100 տուն:

Բաղդադում հրթիռակոծության պահին Վոլֆովիցը չի վախեցել, այլ մի քիչ անհանգստացել է

Հոկտեմբերի 25-ին, երբ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Վոլֆովիցը երկրորդ այցն էր կատարում Իրաք, Բաղդադի «Ալ Ռաշիդ» հյուրանոցը հրթիռակոծվեց: Այնտեղ էր իջեւանել հենց Վոլֆովիցը: Այս միջադեպը միջազգային լայն արձագանք էր գտել: Դրան անդրադարձել էր նաեւ թուրքական հանրային հեռուստատեսությունը՝ մատնանշելով. «Միջադեպից հետո Վոլֆովիցը մամուլի ասուլիսի համար հայտնվեց լրագրողների առջեւ: Նա առանց փողկապի էր, չսափրված, ձայնը դողդողում էր»:

Ամենայն հավանականությամբ, ԱՄՆ պաշտպանության փոխնախարարի մասին համանման հաղորդումներ հեռարձակել էին նաեւ հրթիռակոծությանն արձագանքող աշխարհի առաջնակարգ հեռուստակայանները, որ Վոլֆովիցը պարզաբանումներ տալու կարիքն է զգացել:

Թուրքական «Ենի շաֆաք» թերթի վկայությամբ, երբ առաջին հրթիռը հարվածել է հյուրանոցին, Վոլֆովիցը իսկույն փորձել է մոտենալ պատուհանին՝ պարզելու, թե ինչ է կատարվում, բայց թիկնապահներից մեկը, ինչպես ինքն է ասել, կանխել է նրան: Նա այդ պահին իր իսկ խոսքերով չի վախեցել, պարզապես մի քիչ անհանգստացել է:

Սկզբում Վոլֆովիցը գլխի չի ընկել, թե ինչ է կատարվում: Դրա համար, ասել է նա, ժամանակ էր պետք, այնուամենայնիվ, խոստովանելով, որ մամուլի ասուլիսին տեսախցիկների առջեւ հայտնվելիս ինքը ցնցված էր:

Հ. Ջ.

Մշակույթ

Ստորեւ բարգմանաբար ներկայացնելով «Վաշինգտոն փոստում» տպագրված Ֆիլիպ Քենիկոտի հոդվածը, ցանկանում ենք ընդհանրապես ընթերցողների եւ, մասնավորապես, արվեստագետ ընկերների ուշադրությանը հանձնել հոդվածի կառուցվածքային, ոճական բնույթը, որտեղ ըստ արժանվույն նշվում են կատարող-արվեստագետի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը, մի երեւույթ, որ մեզանում շատ հաճախ բացակայում է: Մեր ընկերների համար արվեստագետը կա՛մ գերազանց է, կա՛մ էլ ոչնչություն: Չենք կարողանում խուսափել ծայրահեղություններից եւ փաստերը ներկայացնել չափավորված, մանավանդ հիմնավորվա՛ծ:

Բելլինիի «Նորմա» առաջարկի եւ պահանջարկի առումով ամենավիճահարույց խնդիրներից մեկն է օպերային բեմադրություններում: Պահանջարկը մեծ է, որովհետեւ 19-րդ դարի տիտանական գլուխգործոցներից է: Բայց նրա գլխավոր անձի դերն այնքան բարդ է եւ ռիսկային, որ առաջարկված երգչուհիներից քչերին է հաջողվում գլուխ հանել դրանից: Ունկնդիր հասարակությունը շուտ չի ներում այն սոպրանոներին, որոնք ձախողում են դերը, ինչպես մի քանի տարի առաջ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայում տեղի ունեցավ Զեյն Իգլենի հետ: Դերը, Համլետի նման, բարձրագույն հոգեւոր արժեք է ներկայացնում, եւ տաղանդավոր դերասանը ընդհանրապես մնում է տվյալ երգչուհու ճակատին:

Հայազգի սոպրանո Հասմիկ Պապյանը, որ Նորմայի դերերգը կատարեց «Վաշինգտոն» օպերայում, ոգեսի նոր (տվյալ թատրոնի համար՝ առաջին) բեմականացման առթիվ, զուրկ է այդ դերի հանդեպ գործված բոլոր տեսակի զանցանքներից: Նա լիովին օժտված է բնության պարգեւած եւ լավ գեներից եկած անհրաժեշտ տաղանդով: Նրա փոքրիկ սայթաքումները, հուզմունքը՝ բառարտահայտման ժամանակ կամ դրամատիկական գաղափարի ոչ ամբողջական միածուլումը հեշտությամբ կարելի է ներել: Պապյանը կարող է Նորմա երգել, մի դեր, որ Բելլինին ինքը «հանրագիտարանային» է որակել: Ձայնը տեղին է, հստակ եւ փարթամ, ափսոյժ եւ տպավորիչ:

«Նորման» թախծոտ ստեղծագործություն է: Բայց լավ թախծոտ, ինչպես ինքնակարեկցությամբ զբաղվելը ծմեռվա կեսին: Դա նախնադարյան Եվրոպայում տեղի ունեցող արգելված սիրո մի պատմություն է: Դրուիդների դասին պատկանող քրմուհի Նորման դրժել է իր կրոնական երդումը եւ ամուսնական կապի մեջ մտել երջանային կառավարիչ Պոլիոնեի հետ, որը սակայն նրան թողնելով՝ հետաքրքրվում է մեկ ուրիշ քրմուհու՝ Ադալջիսային: Նորման՝ գեղեցիկ եւ տիրական, խիստ վիրավորված մտածում է սպանության մասին:

Պապյանը կրթեի այս խճանկարից այնքան էլ գլուխ չի հանում: Սակայն նրա երգեցողությունը հիասքանչ է: Եթե ելեւէջների ցուցադրումը մի փոքր փորձառական էր սկզբում, այնուամենայնիվ, տնայնությունը տեղին էր եւ ընդհանուր առմամբ ճիշտ միահյուսված դերի լիրիկական կառուցվածքին:

Բեմում Նորմայի եւ Ադալջիսայի միաժամանակ հայտնության տեսարաններն ամբողջ օպերայի ամենազգայուն դրվագներն են: Պապյանն ու մեցո-սոպրանո Իրինա Միքուրան այդ դրվագները դարձրեցին կախարդական, իրենց ձայները համաչափորեն եւ հանգիստ վարպետությամբ միախառնելով իրար: Դա առավել եւս տպավորիչ էր, եթե հաշվի առնենք դահլիճի անհարմարությունը: Այս դահլիճը ժամանակավորապես օգտագործվում է՝ մինչեւ վերաբացվի «Քենեդի» կենտրոնի օպերային դահլիճը: «Վաշինգտոն» օպերայի Սահմանադրության դահլիճում նվագախումբը նստում է երգիչների հետեւում եւ դիրիժորին հետեւում հեռուստատեսային այնքան չքողարկված մոնիտորների միջոցով:

Երբ «Վաշինգտոն» օպերան լավ գործ է ներկայացնում, իսկ սա իրոք շատ լավ գործ է, այն երբեք չի փորձում մարդկանց համոզել, որ ինքը Նյու Յորքի «Մետրոպոլիտենին» կամ Լոնդոնի «Ռոյալ» օպերային հավասարազոր է: Նա տարբեր մեծություն է ներկայացնում՝ մի փոքր պարզունակ, բայց իսկական, տեղափոխելով հանդիսատեսին առավել անմեղունակ մի դարաշրջան: Ներկայացման մեջ օգտագործված են սահող վարագույրներ եւ վերեւից իջնող պանելներ, որոնք բեմի վրա ավելորդ շարժում են առաջացնում: Բայց լավ երգեցողությունն ու տիեսի ընդհանուր դրամատիկական անմիջականությունը ոչնչով չեն տուժում այս անհարմարությունների պատճառով: Այս բեմում այս օպերան տեսնելու միակ առավելությունը, գուցե, երգիչներին մոտիկից տեսնելն է: Ողբերգության այդքան արտամոս լինելն ու երաժշտության այդքան լավ լինելը նպաստում են, որ օպերան հաջողությամբ պսակվի:

«Նորման» ամբողջությամբ կանանց մասին է: Տենորն այնտեղ երկրորդական է: Ռիչարդ Մարգիսոնը, որպես Պոլիոնե, երգում է պրագմատիկ տափակությամբ, ոչ՝ առանձնապես գեղեցիկ, ոչ էլ տգեղ ձայնով, բայց բավականաչափ հզոր, որ հասկացնի, որ Պապյանի Նորման պետք է տեղի տա իր առաջարկություններին: Առավել հետաքրքիր եւ տպավորիչ է երիտասարդ բաս-բարիտոն Քայլի Քեսելսենը, որը համոզիչ մեծություն պարգեւեց Օրովեսոյի դերին:

«Վաշինգտոն» օպերայի անցյալ ամսվա «Ֆլեդերմաուս» տիեսի մռայլ ներկայացումից հետո «Նորմայի» նոր բեմադրությունը թարմ շունչ է ներարկում թատերաշրջանին: Մեծապես հանձնարարելի է ինչպես նորեկներին, այնպես էլ մասնագետներին:

Հ. Ծ.

«Նարեկը»՝ աշխի պես պարզ ու բարդ

Երեկ Հայաստանի Ազգային գրադարանի ցուցասրահում բացվեց Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որը ներառում է շուրջ 170 միավոր գրականություն եւ լուսանկարներ՝ «Նարեկի» եւ Նարեկացու մասին:

Ուշագրավ է ցուցահանդեսի հնատիպ գրականության բաժինը, որտեղ տեղ են գտել «Նարեկի» 1701-1850 թվականների հրատարակությունները: Հնատիպ շրջանում (1512-1850) Նարեկացու «Մատյանը» հրատարակվել է 37 անգամ: Այդ հրատարակություններից Ազգային գրադարանը միայն առաջինը չունի, մնացած 36-ը ցուցահանդեսում ներկայացված են:

Ցուցադրությունը պատրաստել է գրադարանի հատուկ, հազվագյուտ եւ արխիվային գրականության բաժինը: Բացմանը ներկա էր ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Կարեն Արիստակեսյանը: «Աչքի պես պարզ ու բարդ «Նարեկի» մասին ելույթ ունեցան ՀԱԳ տնօրեն Դավիթ Սարգսյանը, ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դոցենտ Գուրգեն Մանուկյանը, ամերիկացի հայագետ Պիտեր Քաուին եւ այլք:

Ավստրիայի թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը միջոցառման ընթացքում Ազգային գրադարանին նվիրեց երեք գիրք՝ երկուսը գերմաներեն, մեկը՝ հայերեն:

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Մարիամ Ալամազյանին հանձնվեց Մովսես Խորենացու մեդալ

Տարիներ առաջ Հայաստանի ժողովրդական նկարչուհի Մարիամ Ալամազյանն իր երանուհի քրոջ հետ նախաձեռնեց ու Լենինականում բացեց Ալամազյան քույրերի թանգարանը: Այդ թանգարանին նրանք նվիրել են 660 գեղանկարչական աշխատանքներ, ինչպես նաեւ խեցեգործական աշխատանքներ: Երանուհի Ալամազյանը կյանքից հեռացավ 10 տարի առաջ, եւ թանգարանի ողջ հոգսն ընկավ Մարիամ Ալամազյանի վրա: Երկրաշարժի ժամանակ վնասվել էր նաեւ թանգարանի շենքը, որն այսօր «Լինսի» հիմնադրամի աջակցությամբ վերանորոգվում է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո Մարիամ Ալամազյանը պատրաստվում է թանգարանի ցուցանմուշները հարստացնել՝ ուղարկելով իր նոր ստեղծագործությունները:

Մարիամ Արշակի Ալամազյանը ծնվել է 1907 թ. Գյումրիում: Նկարչության իր առաջին դասերը քրոջ՝ երանուհու հետ ստացել է հարազատ քաղաքում: Նա այժմ ապրում եւ ստեղծագործում է Մոսկվայում: Չնայած իր 96-ամյա տարիքին՝ նա երիտասարդական ավյունով շարունակում է իր սիրած մասնագիտությամբ զբաղվել:

Նկարչուհին հայ-հնդկական բարեկամական կապերի ամրապնդման համար Հնդկաստանի կառավարության կողմից արժանացել է Ջավահարլալ Նեռուի անվան շքանշանին: ՀՀ նախագահի հրամանագրով հայ արվեստի զարգացման գործում վաստակի համար Մարիամ Ալամազյանին շնորհվել է Մովսես Խորենացու անվան շքանշան:

Ինչպես տեղեկացրեց ՈԴ Հայաստանի դեսպանատան մշակույթի բաժնի աշխատակից Գագիկ Գաբրիելյանը, հոկտեմբերի 23-ին նկարչուհուն այցելել է ՈԴ ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սմբատյանը, որն էլ ՀՀ նախագահի անունից նրան է հանձնել պարգեւը:

Շնորհակալություն հայտնելով բարձր պարգեւի համար, նկարչուհին հատուկ նշել է. «Այդ պարգեւն ամենաթանկն է, որովհետեւ դա իմ հայրենիքից է, եւ բաժակ եմ բարձրացնում իմ հայրենիքի բարգավաճման համար», նշված էր հաղորդագրության մեջ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Այո՝ «Օխ»-ին

Օրերս Հունան Ավետիսյանի անվան թիվ 74 դպրոցում անցկացված միջոցառումը նվիրված էր Հունաստանի ազգային տոնին՝ «Օխ»-ին, այսինքն «Ոչ»-ին, որը նշվում է ամեն տարի աշխարհի բոլոր հունական համայնքներում: Միջոցառմանը ներկա էին «Արմենտել» ընկերության գործադիր տնօրեն Լուսակիսը եւ Հունաստանի դեսպանատան աշխատակից Մավրոմատիսը, որոնք հանդես եկան ողջույնի խոսքով՝ նշելով, որ հայ եւ հույն ժողովուրդները ընդհանուր պատմություն ունեն եւ նրանց դարավոր բարեկամությունը շարունակվում է առ այսօր:

Կրթության նախարարության թույլտվությամբ թիվ 74 դպրոցի շուրջ 550 երեխա արդեն յոթերորդ տարին ուսումնասիրում է հունարեն լեզուն: Դպրոցի տնօրեն Պետրոսյանի խոսքերով հունարեն լեզուն դասավանդվում է ոչ միայն որպես օտար լեզու, այլեւ սրա միջոցով հայորդիների մեջ սեր է առաջացնում առ հունական մշակույթը եւ պատմությունը: «Ինձ թվում է, նշեց տնօրենը, հեռանկարային է այդ լեզուն, որովհետեւ այսօր Հունաստանը Եվրոպայի մեր բարեկամ երկրներից մեկն է»: Բավական շատ ուսանողների այստեղից ուղարկում են Հունաստան՝ Աթենքի համալսարանում սովորելու: Բացի այդ, Բրյուսովի անվան ինստիտուտում արդեն կա հունարեն բաժին: Այնպես որ երեխաները դպրոցն ավարտելուց հետո, եթե ընտրեն այս մասնագիտությունը, առա ինչ-որ չափով հիմք կունենան այդ առարկան ավելի խորը ուսումնասիրելու:

Հունական դեսպանատունը դպրոցին տրամադրել է աշակերտական նստարաններ, ապահովել հունարեն գրքերով եւ գրենական պիտույքներով: Նաեւ խոստացել է դպրոցն ապահովել համակարգչային դասարանով, տրամադրել հեռուստացույց, ձայնագրիչ, տեսաձայնագրիչ, ձայներիզներ՝ Հունաստանի պատմությանը, մշակույթին, երկրամասին ավելի լավ ծանոթանալու, լեզուն ավելի լավ ուսումնասիրելու նպատակով:

ՄԵՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հիլիարդ» անսամբլի համերգներ Հայաստանում

«Վէմ» ռադիոն հրավիրել է աշխարհահռչակ «Հիլիարդ» անսամբլին՝ երկու բացառիկ համերգներով հանդես գալու Հայաստանում, որոնք նվիրված կլինեն Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրման 1700 ամյակին:

«Հիլիարդ» անսամբլը (Դեյվիդ Զեյմս, Ռոջերս Քովեյ-Քրամփ, Սթիվեն Հարոլդ, Գորդոն Զոնս) մեկն է հնագույն եւ ժամանակակից երաժշտության աշխարհահռչակ վոկալ կամերային երգչախմբերից: Ինչպես եվրոպական հոգեւոր երաժշտության, այնպես էլ ժամանակակից կոմպոզիտորների հատուկ «Հիլիարդի» համար գրված գործերի բարձրարվեստ կատարումներով անսամբլը հիացրել է իր ունկնդիրներին իր ոճական եւ կատարողական կատարելության մեջ հասնելով թերեւս անգերազանցելի մի բարձունքի: http://www.hilliardensemble.demon.co.uk/

2003 թ. նոյեմբերի 1-ին անսամբլի համերգը տեղի կունենա Երեւանի Ֆիլհարմոնիկ փոքր համերգասրահում: Էջմիածնի Մայր տաճարում նոյեմբերի 2-ին կայանալիք նրանց համերգը կհեռարձակվի Հայաստանի Հանրային հեռուստատեսությամբ: Անսամբլը կներկայացնի հայ եւ եվրոպական հոգեւոր երաժշտություն:

Անցած երեք ամիսների ընթացքում «Վէմ» ռադիոն համագործակցել է «Հիլիարդ» անսամբլի հետ վերջինիս երգացանկի համար ընտրելով եւ նախապատրաստելով V-XV դդ. հայ հոգեւոր երաժշտության բացառիկ գոհարներ: Համերգներին զուգահեռ «Հիլիարդ» անսամբլի կատարմամբ Սաղմոսավանքում ձայնագրվելու են շարականներ: Այս աննախադեպ ծրագրով «Վէմ» Ռադիոն նպատակ ունի հայ հոգեւոր երաժշտության անզուգական գեղեցկությունն ու խորությունը հասցնել միջազգային լայն ճանաչման:

Այս ծրագրի գլխավոր հովանավորն է Թուֆենկյան ընկերությունը www.tufenkian.am:

Ստեղծվում է գրողների նոր միություն

Լոս Անջելեսում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության նախաձեռնությամբ կազմված հանձնախումբը կանոնակարգել է Կալիֆոռնիայի հայ գրողների միության ստեղծման հետ կապված աշխատանքները, մշակել է ծրագիր եւ կանոնադրության նախագիծը:

Կալիֆոռնիայում բնակվող հայ գրողներն առանձին գրությամբ արդեն իսկ հրավիրվել են հիմնադիր ընդհանուր ժողովի, որ տեղի կունենա շաբաթ, 2003 նոյեմբերի 15-ին, երեկոյան ժամը 4.30-ին, Լոս Անջելեսի Իրանահայ միության սրահում:

Ժողովին ներկա է գտնվելու Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, որ հանձնախմբի հրավերով ժամանելու է Լոս Անջելես նոյեմբերի 13-ին:

ՀԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Հայտարարություն

Հայաստանի գրողների միությունը սիրով հրավիրում է Ձեզ
Արտեմ Հարությունյանի
«Հուդայի արձակուրդը» գրքի շնորհանդեսին,
որը տեղի կունենա 2003 թ. նոյեմբերի 6-ին, ժամը 15-ին, Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում: Հասցեն՝ Բաղրամյան 3:

ԹԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



«Միկան» կարեւոր միավորներ կորցրեց

Ֆուտբոլի ՀՀ բարձրագույն խմբի առաջնության վերջնագծում ֆուտբոլասերներին հուզող միակ հարցը թերեւս այն է, թե թիմերից որ մեկը կարժանանա բրոնզե մեդալների: Այդ մրցանակներին հավակնում են «Շիրակն» ու «Միկան»: 24-րդ տուրում «Շիրակը» սեփական հարկի տակ հյուրընկալեց առաջնության արծաթե մեդալներն ապահոված «Բանանցին»: Երկու թիմերի համար էլ խաղը սկզբունքային նշանակություն ուներ: Մրցավեճի ելքը հասկանալի կարեւոր էր շիրակցիների համար, որոնք ջանքեր են թափում 3-րդ տեղում ամրագրվելու համար: Սակայն շիրակցիները խաղադաշտը թողեցին պարտված: Առաջին խաղակեսի ավարտին դիպուկ հարվածով աչքի ընկավ առաջնության ռմբարկու Արա Հակոբյանը՝ խփելով ընթացիկ մրցաշրջանում իր 41-րդ գոլը:

Ընդմիջումից հետո էլ շիրակցիներին չհաջողվեց փրկել խաղը: Ավելին՝ շուտով Արշակ Ամիրյանը կրկնապատկեց հաշիվը: «Շիրակի» պարտությունը ձեռնտու էր «Միկային», որը գյումրեցիներից միավորների տարբերությունը կրճատելու հիանալի հնարավորություն էր ստացել: Սակայն սեփական հարկի տակ հյուրընկալելով Աբովյանի «Կոտայքին», «Միկայի» ֆուտբոլիստները չկարողացան հաղթել մրցակցին: Արդեն 4-րդ րոպեին Հրաչյա Միքայելյանը առաջ մղեց «Միկային» եւ թվում էր, թե դաշտի տերերը հեշտ հաղթանակ կտոնեն, սակայն «Կոտայքը» մարտական բնավորություն դրսեւորեց: Երիտասարդ կոտայքցիները բավական ակտիվ խաղ ցուցադրեցին, եւ եթե մի փոքր հաշվենկատ գործեին գրոհների եզրափակիչ փուլում, ապա կարող էին նաեւ հաղթանակ տոնել:

Մինչեւ ընդմիջման գնալն աբովյանցիները կարողացան ոչ միայն վերականգնել հավասարակշռությունը, այլեւ հաշվի մեջ առաջ անցնել: Նախ Գագիկ Սուքիասյանը հստակ հրացրեց 11 մ հարվածը, ապա աչքի ընկավ Գոռ Միրզախանյանը: Բաց թողած գոլից անմիջապես հետո «Միկան» կարող էր հավասարեցնել հաշիվը, բայց Մանուչարյանի գլխի հարվածից հետո գնդակը դիպավ դարպասի հորիզոնական ծողին: Երկրորդ խաղակեսում «Միկայի» ֆուտբոլիստները շաս ջանքեր գործադրեցին պարտությունից խուսափելու համար եւ ուժեղացրին ճնշումը մրցակցի դարպասին: «Կոտայքն» ամբողջ թիմով նահանջել էր սեփական կիսադաշտը եւ մեծ ուժերով պաշտպանվում էր: Այնուամենայնիվ, «Միկային» մեկ անգամ հաջողվեց գրավել հյուրերի դարպասը: Անկյունայինի խաղարկումից հետո Յակուբեւը թիմին փրկեց պարտությունից: «Կոտայքը» թեեւ պաշտպանվում էր, սակայն առիթը չէր կորցնում կտրուկ հակագրոհելու: Դրանցից մեկի ժամանակ ֆիչ էր մնացել հյուրերը խփեին հաղթական գնդակը:

Այսպես, խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 2-2: «Միկան» երկու կարեւոր միավոր կորցրեց: Հեռթական հաղթանակը տոնեց երկրի չեմպիոնը՝ երեք անպատասխան գնդակ խփելով «Արարատի» դարպասը: Այդ խաղում աչքի ընկան թիմի պատանի ֆուտբոլիստներ Էդգար Մանուչարյանը (2 գոլ) եւ Ժորա Հովհաննիսյանը: Նույնպիսի հաշվով «Լեռնագործը» հաղթեց «Դինամոյին»: Այդ խաղում էլ երկու գոլի հեղինակ դարձավ Ալեն Մովսիսյանը, մեկ գնդակ էլ խփեց Արամ Բենիամինյանը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	23	19	4	0	70-10	61
2. Բանանց	23	17	3	3	72-12	54
3. Շիրակ	24	14	2	8	51-30	44
4. Միկա	23	11	5	7	36-26	38
5. Կոտայք	24	7	7	10	28-46	28
6. Դինամո	24	5	3	16	16-58	18
7. Լեռնագործ	24	3	6	15	19-51	15
8. Արարատ	23	2	2	19	12-71	8

Ռմբարկուները

Արա Հակոբյան	«Բանանց»	41
Արամ Հակոբյան	«Բանանց»	15
Տիգրան Դավթյան	«Շիրակ»	12
Գալուստ Պետրոսյան	«Փյունիկ»	11
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	10

Անվտանգ թռիչքուղի



ZVARTNOTS
ARMENIA INTERNATIONAL AIRPORTS

Եզրափակիչում կմրցեն Կրամնիկն ու Անանդը

Ֆրանսիական Կաղ դ'Ազդե քաղաքում ավարտին է մոտենում արագ շախմատի աշխարհի անդրանիկ առաջնությունը: Եզրափակիչում պատվավոր մրցանակը կվիճարկեն դասական շախմատի գծով աշխարհի չեմպիոն, ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկն ու ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն, հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդը: Դա հայտնի դարձավ կիսաեզրափակիչ մրցախաղերից հետո: Եթե Կրամնիկին եզրափակիչի ուղեգրերը նվաճելու համար հարկ եղավ Գրիշչուկի հետ անցկացնել ընդամենը երկու պարտիա, ապա Անանդը ստիպված էր չորս անգամ նստել խաղատախտակի շուրջ Սվիդլերի հետ մրցավեճում: Կրամնիկը երկու պարտիաներում էլ հաղթեց Գրիշչուկին: Անանդի եւ Սվիդլերի միջեւ առաջ շախմատի կանոններով անցկացված երկու պարտիաներում էլ մրցակիցները կարճատեւ պայքարից հետո համաձայնեցին ոչ-ոքի արդյունքի: Առաջին պարտիայում խաղաղ դաշն կնքվեց 20-րդ քայլում, երկրորդում՝ 28-րդ: Ուղեգրերի հարցը որոշվեց կայծակնային երկու պարտիաներում: Առաջին պարտիայում, որում Սվիդլերը խաղում էր սպիտակներով, գրանցվեց ոչ-ոքի, իսկ երկրորդում հնդիկ գրոսմայստերը 34-րդ քայլում հաղթեց:

Այսպիսով, Կրամնիկն ու Անանդը կվիճարկեն աշխարհի չեմպիոնի տիտղոսը երկու պարտիայից բաղկացած մրցախաղում, որտեղ յուրաքանչյուրին կհատկացվի 25-ական ռոպե:

Ալ Ֆայեդը «Ֆուլհեմը» չի վաճառում

Անգլիական «Ֆուլհեմ» ակումբի տերը՝ Մոհամեդ ալ Ֆայեդը հերքել է բրիտանական մամուլում հայտնված այն լուրերը, թե իբր պատրաստվում է բաժնետոմսերի հսկիչ փաթեթը վաճառել Թաիլանդի վարչապետ Տակսին Շինավատրային: Վերջինս ներկա գտնվելով «Մանչեսթր յունայթեդի» հետ «Ֆուլհեմի» հանդիպմանը, հիացած էր մնացել «Ֆուլհեմի» ֆուտբոլիստների խաղով եւ ցանկություն էր հայտնել գնելու թիմը:

Վնասվածքը խանգարեց Նալբանդյանին

Փարիզում մեկնարկել է «Masters» շարքի թենիսի հերթական մրցաշարը: Ցավոք, վնասվածքի պատճառով մրցաշարին չի մասնակցում Դավիթ Նալբանդյանը, որը հայտավորված էր մրցումներում: Հիշեցնենք, որ անցյալ շաբաթ նա հաջող մրցելույթներ ունեցավ Բազելում՝ հասնելով մինչեւ եզրափակիչ, սակայն վնասվածքի հետեւանքով չկարողացավ վճռորոշ մենամարտում կորտ դուրս գալ: Մեկնարկը հաջող էր բրազիլացի Գուստավո Կուերտենի համար, որը վերջերս Սանկտ Պետերբուրգի մրցաշարի եզրափակիչում հաղթել էր Սարգիս Սարգսյանին: Փարիզում նա պարտության մատնեց ամերիկացի Ֆիշին: Պայքարից դուրս մնաց ամերիկացի եւս մեկ թենիսիստ՝ Սոդերին, որը զիջեց Հրբատուն: Անհաջող էր մեկնարկը ռուսաստանցի Միխայիլ Յուժնու համար, որը պարտվեց իսպանացի Լոպեսից: Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեցին նաեւ Շուլերը, Ֆեդերերը, Կարան, Նովակը, Վերկերկը եւ Հենմանը:

Անվանի գեղասահորդներն ընդգրկվում են պրոֆեսիոնալների շարքերը

2002 թ. օլիմպիական խաղերի գեղասահքի չեմպիոններ Ալեքսեյ Յագուդինը, Ելենա Բերեժնայան եւ Անտոն Սիխարուլիձեն դեկտեմբերի 3-ին պատշաճաբար հրաժեշտ կտան սիրողական սպորտին: Այդ օրը նրանք Վանկուվերում կմասնակցեն պրոֆեսիոնալ գեղասահորդների մրցաշարին: Մրցակարգի համաձայն, Վանկուվերում հանդես եկող գեղասահորդները մեխանիկորեն զրկվում են սիրող-մարզիկի կարգավիճակից: ՌԴ գեղասահքի ֆեդերացիայի նախագահ Վալենտին Պիսեեւը տեղեկացրել է, որ Ալեքսեյ Յագուդինը պատշաճաբար դիմել է ֆեդերացիային եւ հայտնել իր վճիռը: Նա մտադիր է սիրողական սպորտին հրաժեշտ տալու մասին պատշաճաբար հայտարարել նոյեմբերի 1-ին:

Ռեպորտաժ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի եւ «Ավստրիական ավիաուղիների» աջակցությամբ

Դավիթը հաղթեց Խանին

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Հունաստանից

Հայոց լեզուն այս օրերին հաճախ է լսվում Հալկիդիկի փոքրիկ բնակավայրում: Աշխարհի պատանեկան առաջնությանը Հայաստանի երկու տասնյակ շախմատիստներից ու մարզիչներից բաղկացած պատվիրակությունից բացի, մասնակցում են մեր հայրենակից պատանիներ ու աղջիկներ աշխարհի ամենատարբեր երկրներից՝ Ֆրանսիա, Լիբանան, Բուլղարիա, Կանադա, Գերմանիա, Ռուսաստան, Բելառուս, Ուզբեկստան... Այս փոքրիկ շախմատիստներից շատերը Հունաստան են եկել իրենց հայրիկների եւ մայրիկների հետ, եւ այստեղ ժամանակավորապես մի իսկական հայկական համայնք է ստեղծվել: Շատերը մրցաշարի օրերին բարեկամացել են, ցավում են մեկմեկու համար, ուրախանում են միմյանց հաջողություններով: Օրինակ, 7-րդ տուրում Բելառուսում բնակվող 9-ամյա Դավիթ Խաչիկյանը շաս հպարտ էր, որ հաղթել է Թուրքիայի ներկայացուցիչ Խան Կանդիին, եւ նրա ուրախությունը կիսում էին մյուս հայ մասնակիցները:

Ամենակրտսեր տարիքային խմբում, որտեղ խաղում է Դավիթը, Հայաստանը ներկայացնող շնորհալի փոքրիկների քառյակը շարունակում է հավակնել մեդալների: Ճիշտ է, Հայկ Թումաջանը շահած դիրք ստանալով ռուսաստանցի Սաշան Սյուգիրովի դեմ, հուզվեց եւ պարտվեց: Մեր պատվիրակներից ամենաբարձր արդյունքը (7 հնարավորից 5,5-ական միավոր) ունեն Ռուբեն Գաբրջյանը եւ Գրիգոր Դիլանյանը, որոնք Սյուգիրովին գիջում են 1 միավորով: 14 տարեկանների մրցաշարում գերազանց է խաղում Զավեն Անդրեասյանը: Գերմանացի Վալտեր Մարկոֆին հաղթելուց հետո, երեւանցի պատանին վաստակեց 5,5 միավոր եւ այժմ միայն կես քայլով է հետ մնում առաջատարներից:

16 տարեկանների խմբում Տիգրան Մամիկոնյանը 5 միավորով հետապնդում է առաջատար Բորկի Պրեդոխվիչին (Բոսնիա), որն ունի 6 միավոր: Առաջատարներին մոտեցավ նաեւ Արման Փաշիկյանը: Մրցաշարի ավարտին մնացել է 4 տուր:

«Դավադիր ծրագրեր». ի՞նչ ենք անում մենք դրանց դեմ

Ամեն հինգշաբթի մշակույթի հայկական ֆոնդում ֆնարկում-հանդիպումների օր է: Երեկվա հանդիպումը Կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանի հետ էր: Քննարկման էր դրված նրա դեռևս 2001 թ. «Գարունում» հրատարակված «Համակարգված դավադրություն» գրքույկային տարբերակը: Ի՞նչ է համակարգված դավադրությունը եւ ո՞ւմ դեմ է ուղղված: Մարդկության հազարամյա պատմության աշխարհանված նկրտումները, որոնց կոնք, ավարտվել են անփառունակ վախճանով եւ աշխարհակալի հավակնությամբ անհաշտ ողբերգությամբ: Սրա նոպատակը միշտ մեկն է եղել, եղանակները տարբեր: Հակոբ Սանասարյանի մտահոգությունները եզրահանգել են հետեւյալին. «Աշխարհը որոշ բացառություններով կառավարվում է մեկ ուժի կողմից եւ նրան հակադրելի լուրջ ուժեր չկան: Նախ, միջազգային ամենահեղինակավոր ու զորեղ կազմակերպությունները (Համաշխարհային բանկ, Միջազգային արժույթի հիմնադրամ, ՄԱԿ, Եվրահամայնք, Եվրամիություն) վարկերով, կոնվենցիաներով եւ այլ լծակներով, օգտագործելով նաեւ զորեղ երկրների ներուժը, հիմնարար կենսական հարցերում մարդկությանը պարտադրում են դուրս գալ կյանքի սովորական ընթացքից եւ կորստի ուղի որդեգրել»:

Աշխարհի մի անկյունն էլ Հայաստանն է եւ այսօրվա հայ իրականությանն էլ պարտադրված է համանման ծրագիր: Խնդիրը հստակ է, ռեալ իրողությունն ամենի առաջ. ամենից վտանգավորը՝ երկիրը մեծ թափով հայաթափ անելն է, մնացածներին կառավարելը դառնում է ավելի դյուրին: «Պատերազմի» փողարկված մյուս մեթոդները տանում են ազգային առանձնահատկությունների ոչնչացման, մշակույթների համահարթեցման, պատմական հիշողության կորուստի:

Դավադիր ծրագրերն ընդգրկում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ հոգեւոր, կրթական, գիտական, մշակութային՝ ընտանեկան կյանքի քայքայում, ազգային մշակույթի թուլացում, հեռացում արմատներից, պոռնոգրաֆիկ գրականության խրախուսում (տեսմրցանակներ, պարգեւներ), ականավոր մտավորականների վարկաբեկում, երիտասարդության ներգրավում անմիտ զվարճանքների մեջ, հոգեւոր կյանքի տկարացում, տգեղ, անկիրթ խավի բարձրացում իշխանական աստիճաններին, տարբեր պատճառներով դիլետանտների ներգրավում, մարդկանց ցավի եւ աղքատության մատնում:

Հավաքին իշխում էր այն մտայնությունը, թե նման ծրագրերը գործում են մեր կամքից անկախ, աշխարհի հզոր ուժերի ցանկությամբ, իսկ իրականացնելու համար նորօրյա աշխարհակալները կիրառում են ամենահզոր՝ տեղեկատվական եւ կենսաբանական զենքերը: Բնության այսպիսի քայքայումն ու այսպես կոչված գենամոդիֆիկացված սնունդը լիուլի բավարար են մարդկության աստիճանական կործանման համար: Հիմնական խայծը համարվեց միջազգային եւ միջտեսական վարկերը, որոնք առատության եղջյուրից հոսում են աղքատ երկրների մի խումբ ընչաքաղցների գրպանները՝ հաջորդ սերունդներին դատապարտելով հավերժական տկարության ու կախվածության:

Բացի այս կարծիքներից, կային այլ մոտեցումներ նույնպես: Ի՞նչ ենք անում իրոք մեր լեզուն, սովորույթները, եկեղեցին, մշակույթը պաշտպանելու համար, արդյոք մենք կրողն ու ժառանգորդնե՞րն ենք մեր պատմամշակութային արժեքների, ստեղծո՞ւմ ենք ներքին պաշտպանական կառույցներ, գործո՞ւմ են ազգային անվտանգության թեկուզ բնազդային մեխանիզմներ, թե՞ վազում ենք այլոց հետեւից կամ անտարբեր հուսահատության մեջ ընկնում:

Հակոբ Սանասարյանն իր այս գրքույկում մատնանշում է հստակ ճանապարհներ՝ չվստահել միջազգային եւ «ազգային» համարվող այն կուսակցություններին, որոնք ուղղակի կամ փողարկված քարոզում ու պարտադրում են վերոհիշյալ ծրագրերը, կտրականապես մերժել վարկային տոկոսներ հասկացությունը, վարկային խորհրդավությունը համարել կաշառակերության եւ կողոպուտի ինստիտուտ՝ դիմակայելու միակ զենքը համարելով ազգային արժեքներին աղավնելը:

Հանդիպման վերջում մշակույթի հայկական ֆոնդի նախագահ Արեւշատ Ավագյանը՝ տագնապով անդրադարձավ շենքում (Գր. Լուսավորչի 15) գբաղեցրած իրենց տարածքների վերաբերյալ վիճահարույց խնդրին, գտնելով, որ գիտությունների ազգային ակադեմիան պատերազմ է հայտարարել մշակույթին: Մշակույթի հայկական ֆոնդն այդ տարածքն զբաղեցնում է օրինական եւ տարիներ առաջ դատարանի վճիռն անարդար է եւ ապօրինի, ինչն էլ իր հերթին է նպաստում մշակութային հաստատությունների ոչնչացման ծրագրի իրականացմանը:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ընթացիկ օրերի տեղեկատվություն

Հատիս սարից գլորվել է «ՈՒԱԶ» մեքենա

Ինչպես տեղեկացանք ԱԻՎ լրատվական կենտրոնից, հոկտեմբերի 26-ին, ժամը 13:00-ի սահմաններում Կոտայքի մարզի Հատիս սարում տեղի է ունեցել պատահար՝ «Արագած» ալպինիստական ակումբի նախագահ Արայիկ Ներսիսյանը «ՈՒԱԶ-469» մեքենայով սարից իջնելիս կորցրել է ղեկավարումը եւ գլորվել մինչեւ ստորոտը: Ա. Ներսիսյանը ստացել է դիմածնոտային վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց: Ներկայումս նրա առողջական վիճակը, ըստ բժիշկների, ծանրից միջին է:

«ՄԱԶ» մեքենան գլորվեց Դեբեդ գետը

Հոկտեմբերի 28-ին «ՄԱԶ» մակնիշի մեքենան Վանաձոր-Ալավերդի ճանապարհահատվածում ընկել է Դեբեդ գետը: Վարորդը՝ Ալբերտ Սեբյանը (ծնվ. 1959 թ.), ստացել է թեթեւ մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Վանաձորի թիվ 1 հիվանդանոց:

Ուժեղ քամին վնասներ է պատճառել

Հոկտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը Վայոց ձորի մարզում, Եղեգնաձորում, Խաչիկ գյուղում ուժեղ քամին քշել տարել է Ռ. Միքայելյանի տան տանիքի թիթեղները: Մասնակի վնասվել են գյուղի անասնագոմերի տանիքները, շրջվել են էլեկտրասյուները եւ գյուղը հոսանքազրկվել է: Իրականացվում են վերականգնողական աշխատանքներ:

Գեղարքունիքի մարզի Վանեվան գյուղի միջնակարգ դպրոցի տանիքը քշել է քամին, կոտրել դպրոցի ապակիները: Քամին քշել է նաեւ Փոքր Մասրիք գյուղի մանկապարտեզի տանիքը եւ վնասել մի քանի այլ շինությունների:

Ղժբախտ պատահարից մահացան 2 մարդ

Հոկտեմբերի 26-ին Արագածոտնի մարզի Թալին գյուղի Սպանդարյան փողոցում շինարարական աշխատանքներ իրականացնելու ժամանակ փուլ է եկել անասնագոմը եւ փլատակների տակ են հայտնվել 3 մարդ: Փլուզման հետեւանքով 1975 թ. ծնված Ժորա Գրիգորյանը եւ 1986 թ. ծնված Էդգար Գրիգորյանը տեղում մահացել են, իսկ 1961 թ. ծնված Մարտին Ավագյանը տեղափոխվել է Թալինի հիվանդանոց ու գտնվում է բժիշկների հսկողության տակ:

Լրագրողը՝
ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆԻ

Համակարգչային ուսուցման կենտրոն
"CompMaster"
MS Windows, Word, Excel, Internet, E-mail, fax, printer, scanner
MS Excel (արդ.) MS Access Corel Draw Adobe Photoshop
QuarkXPress ArchiCAD 3D MAX Studio
C ++ Visual C ++ Visual Basic Java Visual FoxPro
HTML, Java Script, (+ MS FrontPage, Macromedia Dreamweaver)
HTML (արդ.), Macromedia Dreamweaver MX, CSS, DHTML
Macromedia Flash, Action Script
ASP, PHP, JSP
Աբովյան 16
Հեռ.(+374 1) 564218
E-mail; comp@master.am
Http:// www.master.am

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՑ

«Ջավախահայերի մի սվար հաստված ձայն է տալու Զումբեր Պատիաշվիլու «Միասնություն» կուսակցությանը»

Խորհրդային Վրաստանի կոմկուսի վերջին առաջին քարտուղար Զումբեր Պատիաշվիլին երեկ նախընտրական քարոզչական այցով ժամանել է Ախալքալաք:

Ջավախքում գործող, սակայն Վրաստանի արդարադատության նախարարությունում չգրանցված «Վիրք» կուսակցության ղեկավար Դավիթ Ռստակյանն «Ազգի» հետ հեռախոսազրույցում նշեց, որ Ախալքալաքի հայ բնակչությունը ծափահարություններով դիմավորեց «Միասնության» առաջնորդ Պատիաշվիլուն:

«Դրանք մաքուր, անկեղծ ու ի սրտե ծափահարություններ էին եւ միանգամայն տարբերվում էին մի քանի օր առաջ Ջավախք ժամանած Էդուարդ Շեւարդնաձեի համար կազմակերպված ծափահարություններից», ասաց Ռստակյանը:

«Ջավախահայերի մի սվար հաստված ձայն է տալու Պատիաշվիլու կուսակցությանը, քանի որ նրա քաղաքական հայացքները համընկնում են տեղի հայության ցանկություններին եւ նպատակներին», ասաց Ռստակյանը:

«Միասնություն» կուսակցությունն արմատական ընդդիմություն է էդ. Շեւարդնաձեի վարչակազմին եւ, ի տարբերություն այլ ընդդիմադիր ուժերի, վերջին տասը տարիներին չի համագործակցել իշխանությունների հետ: Ինքը՝ Պատիաշվիլին, ընդգծված ռուսամետ դիրքորոշում ունի եւ, ի տարբերություն իշխանությունների ու ընդդիմության, չի դնում Ախալքալաքից ռուսական 62-րդ ռազմակայանի դուրսբերման խնդիրը:

Սովորաբար իշխանությունների օգտին քվեարկող ջավախահայությունը նոյեմբերի 2-ին հավանաբար կխախտի ավանդույթը հիմնականում երկու պատճառով. նախ՝ գործող իշխանությունները փորձում են ժամ առաջ Ախալքալաքից դուրս բերել ռուսական ռազմակայանը, ինչը նշանակում է եւս 2000 մարդու գործազրկություն (մոտավորապես այսքան հայեր են ծառայում կամ աշխատում ռազմակայանում- խմբ.), երկրորդ՝ կառավարամետ «Հանուն նոր Վրաստանի» դաշինքում առաջին հայը 54-րդ տեղում է, մինչդեռ ցուցակի ավելի բարձր տեղում ընդգրկված են երկու ադրբեջանցիներ:

«Ջավախահայությունը երբեք էլ չի քվեարկել Շեւարդնաձեի կամ կառավարամետ ուժերի օգտին: Ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ էլ արդար ընտրությունների մասին խոսք չի կարող լինել: Մենք քվեարկում ենք Պոդոսի օգտին, բայց վերջում պարզվում է, որ ձայներն ստացել է Պետրոսը», ասաց Ռստակյանը:

Համաձայն վերջին սոցիոլոգիական հարցումների, նոյեմբերի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում կհաղթեն «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքը եւ Միխայիլ Սահակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» կուսակցությունը: Նրանց հաջորդում են լեյբորիստները, «Նոր աջերը», Ասլան Աբաշիձեի «Աղորձինեբան» եւ կառավարամետ «Հանուն նոր Վրաստանի» դաշինքը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

Microsoft CERTIFIED Partner
Microsoft CERTIFIED Technical Education Center
VUE.
@rminco Global Telecommunications
VUE տեսային կենտրոնն առաջարկում է հանձնել Microsoft, CIW, Cisco Systems եւ այլ ֆիրմաների տրամադրած քննություններ եւ ստանալ համապատասխան վկայական:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ Փ. Բյուզանդի 1/3, 7-րդ հարկ
ժամը 10.00-17.30
Հեռ.՝ 582-760

ՀՀ Կենտրոնական բանկը 31.10.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	558.34	552.80	563.90
EUR	1	եվրո	655.27	651.30	659.20
RUR	1	ռուս. ռուբլի	18.70	17.60	19.80

Շնորհավորանք

Արտանց շնորհավորում ենք Գրետա Մանուկյանին՝ ծննդյան օրվա առթիվ: Սիրելի մայրիկ, մաղթում ենք քեզ քաջ առողջություն, հաջողություն եւ երկար տարիների խաղաղ ու անվրդով կյանք:
Քեզ միշտ սիրող ու հարգող՝ Ռոբերտ, Նարինե, Գրետա, Արմեն:

Advanced ENGINEERING
Advanced Engineering Associates International
Հայտարարություն
Advanced Engineering Associates International (AEAI) կազմակերպությունն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորած էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացման ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ գովազդային ընկերությունների միջեւ գովազդային հոլովակների հեռուստաթեր տեղադրելու նպատակով: Մրցույթի պայմաններին ծանոթանալու եւ փաստաթղթերը ստանալու համար կարող եք դիմել AEAI-ի գրասենյակ՝ Երեւան, Պռոշյան 2 հասցեով, մինչեւ ս. թ. նոյեմբերի 5-ը: Հեռ.՝ 221969, 261770, (09) 498565:
Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 30. 10. 2003 Գինը՝ 100 դրամ